

ԲԵՐԵՐՈՆԵՅԱՆ ՄԱՅՈՒՆՅԱՆ

ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

3 հոկտեմբերի

Առողջապահության նորանշանակ
նախարարին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծարյագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ առողջապահության նորանշանակ նախարար Լեւոն Ալթունյանին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրէն Արմեն Զարցյանին:

Հանդիպման Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց նախարարին, հաջողություններ եւ արդյունավետ առաքելություն մարդեց՝ առողջապահության բարդ եւ դժվարին ոլորտում:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Նախարարն ամեն ջանք կգործադրի ոլորտի զարգացման ուղղությամբ, նոր ձեռքբերումներով այն կբարձրացնի մի նոր մակարդակի, եւ ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին՝ իր աշխարհափայլում

թեմերով, ունեցած հնարավորությունների սահմաններում պիտի շարունակի գորակցությունները ոլորտի արդյունավորմանը:

Իր հերթին տիար Լեւոն Ալթունյանը Հայոց Հայրապետին ներկայացրեց առողջապահության զարգացման եւ առկա խնդիրների հաղթահարման վերաբերյալ իր տեսլականը՝ վստահեցնելով, որ ամեն բան պիտի անի այս պատասխանատու ծառայության մեջ՝ ի նպաստ հայրենի բնակչության:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց առողջապահության խնդիրներին: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը մասնավորապես կարեւորեց բժշկական ծառայությունների մատչելիությունը կարիքավորների եւ հասարակության խոցելի խմբերի համար:

4 հոկտեմբերի

ՀՀ Տրանսպորտի, կառուց. եւ ենթակառուցվածքի
նախարարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ տրանսպորտի, կապի եւ ենթակառուցվածքի նախարարին՝ Նորանշանակ նախարար Կահան Մարտիրոսյանին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհավորելով պրն Կ. Մարտիրոսյանին՝ այս պատասխանատու պաշտոնում նշանակման կապակցությամբ, վստահություն հայտնեց, որ վերջինս իր ծառայության ընթացքում Երկրավորի օրհնությամբ կկարողանա բազում օգտակար ձեռքբերումներ արձանագրել՝ ի նպաստ հայրենիքի առաջընթացի:

Այնուհետեւ Երախտագիտության խոսք ասաց նախարար Կ. Մարտիրոսյանը եւ Վեհա-

փառ Հայրապետին ներկայացրեց իր տեսլականներն ու առաջիկա ծրագրերը:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ տրանսպորտի, կապի եւ ենթակառուցվածքի տեխնոլոգիաների ոլորտներին եւ առկա մարտահրավերների հաղթահարման ուղղված միջոցառումներին: Մասնավորապես խոսվեց երկրի ապագայի համար մեծ կարեւորություն ներկայացնող ենթակառուցվածքի տեխնոլոգիաների զարգացման անհրաժեշտության մասին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշեղ Եսս Բաբայանը:

10 հոկտեմբերի

Ավագ լեյտենանտ Սարգիս Գաբրիելյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 2015 թ. մարտին դարաբարդա-աղբեջանական զորքերի չփնան գծում աղբեջանական կողմի սարդիչ գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած ավագ լեյտենանտ Սարգիս Գաբրիելյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ՃՈՒ հոգեւոր առաջնորդ Կրթաբեյ Եսս Արախամյանի եւ հնդկահայոց հոգեւոր հովիվ Մովսէս Բաբայանի:

Հայրենյաց պաշտպան սպան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կաթողիկոսի Ս. Նազարեթ Եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ անհրաժեշտ բուժում էր ստացել Հնդկաստանում եւ օրեր առաջ վերադարձել հայրենիք:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, քաջարի ծառայության համար իր հայրապետական գնահատանքն ու օրհնությունը բերելով ավագ լեյտենանտ Ս. Գաբրիելյանին, խոր ցավով ան-

րադարձավ սպայի վիրավորմանը եւ վստահություն հայտնեց, որ Նա միեւնոյն ոգով կշարունակի ծառայել հայրենիքին ու հայ ժողովրդին:

Իր հերթին ավագ լեյտենանտ Ս. Գաբրիելյանը հոգաճու վերաբերմունքի եւ ստանձնած խնամատարության համար Երախտագիտություն հայտնեց Գաբրիել Բ Վեհափառ Հայրապետին ու Կաթողիկոսի Ս. Նազարեթ Եկեղեցու վարչությանը: Նորին Սրբությունը, աղոթք վերառաջելով առ Աստված, մարդեց, որ Ամենակալն Իր հարատեւ օրհնության ներքո պահի արհաւիրտ հայրորդուն, եւ վերջինս Երկրավորի գորակցությամբ իր կյանքն ապրի բարի ու գեղեցիկ իրագործումներով:

Վերջում Վեհափառ Հայրապետը լաւե աղոթեց, որ Աստված խաղաղության մեջ պահի ու պահպանի հայրենիքի սահմանները, եւ հետապնդու աշխարհակ ցավի իրողությունները տեղ չգտնեն հայոց կյանքում:



10 հոկտեմբերի

ՀՀ-ում Հունաստանի
նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նաֆսիկա Նեսի Է-վա Վրայային:

Նորին Սրբությունը, նշանակման առիթով շնորհավորելով դեսպանին, արդյունավոր առաքելություն ցանկացավ նրան:

Վեհափառ Հայրապետը կարեւորեց երկու երկրների միջեւ առկա բարեկամական հարաբերությունները, որոնք ամուր հիմք են ծառայում ներկա համագործակցության առավել զարգացման համար: Նորին Սրբությունն անդրադարձավ

երկու ժողովուրդների պատմական առնչակցություններին՝ խոսելով լաւե Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում երկու ժողովուրդների կրած ծանր եւ ողբերգական կորուստների մասին:

Հունաստանի դեսպանն ընդունելության եւ բարեմարդանքների համար շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հավաստիացնելով, որ առաքելագույն ջանքեր կներդնի՝ բարեկամ երկրների միջեւ հարաբերությունների խորացմանն ու հայ-հունական համագործակցության առավել զարգացմանն ի խնդիր:

Շարունակությունը՝ էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 1

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց այն համագործակցությունը, որ առկա է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ-ում Հունաստանի դեսպանատան միջև՝ գնահատանք հայտնելով Հունաստանում հայ եկեղեցականների ուսումնառության գործում ցուցաբերվող աջակցության, ինչպես

11 հոկտեմբերի

Նաեւ սրբալույս Մկրտչի պատրաստության համար անհրաժեշտ ծիթայուրդի հայթայթման համար: Անդրադարձ կատարվեց Նաեւ երկու եկեղեցիների եղբայրական հարաբերություններին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Պաշտականության նորանշանակ նախարարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհավորելով տիար Վ. Սարգսյանին, հաջողություններ մաղթեց նրան՝ պաշտպանության նախարարի պատասխանատու պաշտոնում:

Խոսելով բանակ-հասարակություն հարաբերությունների մասին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այսօր հայ ազգի յուրաքանչյուր զավակ իրեն Հայոց բանակի մասնիկը պետք է զգա և ապրելով այդ գիտակցությամբ՝ իր մասնակցությունը բերի բանակաշինության ու հայրենիքի պաշտպանության գործին: Նորին Արքեպիսկոպոսը հաստատեց, որ Հայոց եկեղեցին ամեն ջանք ու ինքնավստահություն կգործադրի այդ գիտակցության ձեռավորման համար:

Իսկ պաշտպանության նախարարն անդրադարձ կատարեց ազգ և բանակ հասկացությունների նույնականացման անհրաժեշտու-

թյանը՝ ներկայացնելով բանակ-հասարակություն կապի ամրապնդման ուղղությամբ իրականացվելիք ծրագրերը: Վերջինս ընդգծեց, որ բանակը ոչ միայն պետք է լինի հասարակության հայելին, այլև դառնա նրա յուրօրինակ դարբնոցը՝ այս ամենում կարեւորելով Նաեւ բանակի հոգեւոր առաջնորդության և ՉՈՒ գնդերների առաջնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վերհիշելով Արցախ կատարած իր վերջին այցելությունը, գոհունակությամբ հաստատեց, որ հայ զինվորի համար բանակային ծառայությունը սոսկ պարտականություն չէ, այլ՝ հայրենիքի պաշտպան լինելու հանձնառություն և գիտակցություն:

Վերջում Նորին Արքեպիսկոպոսը վերստին պաշտպանության նախարարին մաղթեց Աստուծո օրհնության ներքո պատվով իրականացնել իր առաքելությունը՝ մեր ժողովրդի պաշտպանության և հայրենիքի արժանավոր ապագայի կերտման համար:

Պարզեաբաշխություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հոկտեմբերի 11-ին Ս. Ս. Օ. Ս. Տ. Պարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Աստված - Ս. Մեսրոպ» պատվով բարձր շքանշան հանձնեց տիար Տաճատ Վարդանյանին և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան՝ ծառայողականության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պրոռեկտոր տիկ. Մարինե Ղազարյանին՝ բարձր գնահատելով նրանց եկեղեցական երկարամյա ծառայությունը և բարի վաստակը Հայոց Եկեղեցում:

Արարողությունը բացվեց Տերունական աղթքով, ապա ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի դիվանատան ներկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը:

Եկեղեցու անդատանում տիկին Մարինե Ղազարյանի կնիքով ծառայությունը ներկայացրեց Հայաստանի աստվածաշնչային քննության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը: Պրն Տաճատ Վարդանյանի եկեղեցատեղ կերպարի և ազգագույն գործունեության մասին խոսք ասաց Արմավիրի թեմի հոգեւոր պատավոր Արտակ ավագ քհն. Սիմոնյանը: Այսուհետև «Էջ Միածինն ի յօրե» շարականները բերվեցին հայրապետական կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն Եպս. Հակոբյանը և Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի

տնօրեն Վարդան Եպս. Նավասարդյանը:

Հնդառաջ Ռուսաստանի և Նոր Ասիայից եկած հայոց թեմի առաջնորդ Եղորտ արք. Ներսիսյանի խնդրանքին՝ տիար Տ. Վարդանյանին ուղղված հայրապետական սրբատառ կոնդակում ի մասնավորի ասվում է. «Մայր Աթոռ Սր Եջմիածինից հղում ենք Ձեզ հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները և շնորհավորում ձնդյան 75-րդ տարեդարձի հոբելյանական առիթով»:

Մայր Աթոռ Սր Եջմիածնի ճեմարանում Ձեր պաշտոնավարման տարիներից առիթ ունեցան ճանաչելու հավատավոր, եկեղեցատեղ ու ազգատեղ հայրորդու: Այսօր ուրախ ենք բարձր գնահատանքի Մեր խոսքը բերել Ձեզ՝ մեր ժողովրդի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կյանքում Ձեր նվիրումի և գովաբանական վաստակի համար...

Արարատյան հայրապետական թեմում Մեր փոխանորդության տարիներից Մեր սիրով հրավիրեցինք Ձեզ ստանձնելու թեմի մամուլի բաժնի պատասխանատուի, ապա դիվանապետի պաշտոնը՝ ամենօրյա աշխատանքի մեջ աշխատես լինելով մեր Սր Եկեղեցու հանդեպ Ձեր որդիական անկեղծ սիրուն ու նախանձախորհրդյան, հասուն մեր ժողովրդի հոգեւոր կյանքի պայծառության ջանք ու նվիրում ներդնելու Ձեր ազնիվ պատրաստակամությամբ: Հարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցել է Մոսկվա-Երեւան ավտոբուսի վթարի կապակցությամբ

Հոկտեմբերի 14-ին Ս.Ս.Օ.Ս.Տ. Պարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցություն է հայտնել Բեյսալ-Վարկիվավազ մայրուղու վրա վաղ առավոտյան Մոսկվա-Երեւան երթուղային ավտոբուսի վթարի հետեւանքով զոհված հայորդիների ընտանիքներին:

«Խորապես ցավում ենք կատարվածի անուղղությամբ և արդողում վթարի զոհ դարձած մեր զավակների համար: Դժվարին այս պահին Սուրբ Հոգու մխի-

թարություն ենք հայցում և մեր գորակցությունը բերում գոհվածների ընտանիքներին ու հարազատներին: Նաեւ շուտափույթ ապաքինում մաղթում վիրավորներին», - ասված է հայրապետական ցավակցագրում:

Վեհափառ Հայրապետի կողմից հանձնարարական է տրվել Հարավային Ռուսաստանի հայոց թեմին՝ անհրաժեշտ հոգեւոր խնամք և աջակցություն ցուցաբերել վթարից տուժածներին և նրանց ընտանիքներին:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանին շնորհվեց ասպիրանտուրայի ուսուցման իրավունք

Հոկտեմբերի 7-ին, հանդիսագրությամբ Ս. Ս. Օ. Ս. Տ. Պարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ ՀՀ կրթության ու գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Կոմիտասյան դպիկոնու տեղի ունեցավ ճեմարանին ասպիրանտուրայի ուսուցման իրավունքի շնորհման արարողությունը:

Արարողությունն սկսվեց Տերունական աղթքով, ինչեղին ՀՀ և Գեւորգյան ճեմարանի օրհներգերը: Այսուհետև բացման խոսք ասաց ճեմարանի տեսուչ Պարեգին վրդ. Համբարձումյանը՝ ճեմարանի կրթական առաջընթացի տեսանկյունից մեծապես կարեւորելով այս իրադարձությունը:

Արարողությանը ներկա ՀՀ բարձրագույն ուսումնական հանձնաժողովի նախագահ ք. գ. դ. Լիլիթ Արզումանյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված՝ Գեւորգյան ճեմարանում մասնագիտական խորհրդի կազմի տեղեկագիրը, գիտական մասնագիտությունների անվանացանկը և կանոնակարգը:

«Շատ ուրախ եմ, որ կարող եմ մի փոքր նպաստ բերել այս արարողությանը և այս երեւոյթին: ...Գործում եմ, որ սա կնպաստի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հետագա գործունեությանը և այն փառքին, որ նախկինում ունեցել է և պետք է ունենա մեր Գեւորգյան ճեմարանը», - ասաց ԲՈՒՀ-ի նախագահը:

Այսուհետև շնորհավորական խոսքով ներկայությունն ունեցող ՀՀ կրթության ու գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը: Շնորհավորելով մենքի ճեմարանի կյանքում կարելու այս ծեղրեքման առիթով՝ նախարարը մասնավորապես նշեց. «Մենք գտնվում ենք մի հաստատություն պատերից ներս, որտեղ, առաջիններից մենք հայաստանի Հանրապետության մեջ, մեր պատմական հայրենիքի այս փոքր հատվածում սկսվեց մասնագիտական կրթության դասավանդումը: Եվ ես իմ երիտասարդության տարիներից հիշում եմ, թե նույնիսկ խորհրդային տարիների ժամանակ ինչ մեծ պատվով էր այստեղ դասավանդվել: Հնորայանքին էին գալիս այստեղ դասավանդվել և հայրադրությամբ էին դա նշում, որովհետև այստեղ է, որ անթերված է հայ տեսակի որակը»:



ԿԳ նախարարը փաստեց, որ ասպիրանտական ուսուցման իրավունքի շնորհումով ճեմարանը դառնում է միջազգային մակարդակի հաստատություն, որն «Աստվածաբանություն» մասնագիտության մուտքով և մասնագիտական խորհրդի ձեռնավորմամբ կարելու առաքելություն ունի իրականացնելու՝ ներկա աշխարհի պայմաններում՝ իբրեւ կողոը Հայոց եկեղեցու դարավոր ժառանգության և արժեքների, իր երթուղիները բերելու աստվածաբանական Նորոյա զարգացումներում:

Պրն Լեւոն Մկրտչյանն այս առիթով շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին այն մեծ ուշադրության համար, որ Նորին Արքեպիսկոպոսը տաժում է կրթության, գիտության և հայեցի դաստիարակության հանդեպ:

Յերենկոյի ընթացքում ազգային երգերի կատարմամբ հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՀ պրեզիտի վաստակավոր գործիչ Հարություն Թովհիկյանի:

Արարողությունը եզրափակվեց Պարեգին Բ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

«Մեր լուսամիտ, երանաշնորհ Գեւորգ Դ Հայրապետի տեսիլքով ու անխնայ ջանքերով հաստատվեց այս հոգեւոր հաստատությունը՝ նպատակ հետապնդելով, որ եկեղեցական մեր կյանքում բարի ավանդույթները վերականգնվեն, և այս հաստատությունից ներս կրթվեն, դաստիարակվեն արժանավոր եկեղեցականներ ու հայորդիներ: Այս հաստատության նշանաբանն էր՝ առաջին հերթին կրթել արժանավոր հայ մարդ, հայ անհատ և, միաժամանակ, պատաստել արժանավոր հայ եկեղեցականը»:

Եվ այս հաստատությունն իր առաքելությունը փառքով ու պատվով իրականացրեց ազգային մեր կյանքում: Բազում մեծանուն մտավորականներ որս բեկան այս հաստատությունից և իրենց կարելու ծառայությունը բերեցին ազգային մեր կյանքին, Նաեւ արժանավոր եկեղեցականներ, ունեցնելով իրենց հոգեւոր կյանքը պայծառացնելու, մեր ժողովրդի հավատքը լուսավորելու, նրա ընթացքը հավատարմության մեջ պա-

հելու մեր հայրերի սրբազան հավատքին»,- նշեց Հայոց Հայրապետը:

Աղթքով հիշելով ճեմարանի ջանք մշտական ապահովելու երախտավորներին՝ Նորին Արքեպիսկոպոսը գոհունակությամբ արձանագրեց, որ այսօր՝ հայրենիքի անկախության պայմաններում, կրթջախը Նոր ուժգնությամբ է շարունակում իր առաքելությունը՝ Հայաստանյայց Առաքելական Սր Եկեղեցուն հասցնելով հոգեւորականների արժանի սերունդ:

Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ ասպիրանտական կրթության իրավունքի շնորհումը Գեւորգյան ճեմարանին ոչ միայն խրախույս պիտի լինի ճեմարանականների և եկեղեցականների համար, այլև պատասխանատվության աստիճանի բարձրացում, որպէսզի ճեմարանի հարկի ներքո ներսի գիտնական հոգեւորականների սերունդը՝ աստվածաբանական տարբեր ոլորտներում գորակցելու ու զարգացնելու հայ հոգեւոր միացը:

Նորին Արքեպիսկոպոսն այս նշանակալի իրադարձության առիթով իր գնահատանքը հայտնեց կրթության և գիտության նախարարին՝ Հայոց եկեղեցուն ցուցաբերվող մշտական գորակցության համար, ինչպես Նաեւ իր հայրապետական օրհնությունը բերեց ԲՈՒՀ-ի նախագահ Լիլիթ Արզումանյանին և ՀՀ ԿԳ կիցնեցավորման գործակալության պետ Սուվետ Մուխիսյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նաեւ իր գնահատանքը հայտնեց ճեմարանի տեսչությանն ու դասախոսներին՝ ճեմարանի անպարտական ուսուցման իրավունքի շնորհման ուղղությամբ իրականացրած աշխատանքների համար: Պարեգին Բ Հայրապետը հորդորեց ճեմարանի սաներին ամեն ջանք գործադրել՝ գիտական եկեղեցականների տեսիլքի իրականացնողները դառնալու համար:

Վերջում Պաճախից արդթքով Հայոց Հայրապետն օրհնեց ներկաներին:

Արարողությանը ներկա էին Գեւորգյան ճեմարանի դասախոսներն ու սաները, այս օրերին Մայր Աթոռում ընթացող «Սուրբ Գրքի հայերեն թարգմանություն» ու հրատարակությունը պատմության հուշվոյթում» միջազգային գիտաժողովի մասնակիցները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ
Արժափն հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի Տնօրեն
Նաթան արք. Զովհաննիսյանն ընդունեց

3 հոկտեմբերի

Ուրուզվալի համալսարանի ռեկտորին



Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեց Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության համալսարանի ռեկտոր Ռոբերտո Մարկալայանի գլխավորած պատվիրակությունը:

[illegible]

Սրբազան հայրը հյուրին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությունը հայ ժողովրդի կյանքում եւ ներկայիս գործունեությունը



Սկիզբը՝ էջ 2

Հայրապետին համար գոհունակություն է
 և նաեւ անորոշաբանական, որ եկեղեցեցու ու ազգա-
 ւոր Ձեր ոգին ղուց հոգածուն դաստիարակու-
 թյամբ փոխանցել եք Ձեր զավակներին: Ձեր որ-
 դին, որպէս տնայլ հոգեւորական, տարիներ շա-
 րունակ արդյունաբեր ծառայություն է քերուն
 մեր Սբ Եկեղեցու լուսավոր անդաստանում: հո-
 գեւոր ստակոյ մատուցելով մեր ժողովրդի հավա-
 տապոր գնահատականը»:

Տիկին Սարիսեն Ղազարյանին հանձնվելիք կոնդակում մասնավորաբար ասվում է. «Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հղում ենք Ձեզ հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Արարողյան հայրապետական թեմում Սեր փոխարքեպիսկոպոսի շրջակայ՝ ճանաչեցինք Ջեղ, Ջեր Սեր հրավերին ընտանող՝ ստանձնեցինք թեմի գլխավոր ֆինանսիստի պատասխանատու պարտավարությունները: Կյո սոյից և կեր՝ շուրջ տասնհինգ տարի, Պոչ զորհանձնակիցներին ծառայեցին Առաքելական Սեր Սբ Եկեղեցու շիւթրթյան և պալատությանը՝ Կյ պապ բերելով Ջեղ զիտելիքները, փորձն ու կարողությունները: Ինչպես թեմում, այնպես էս Սբ Էջմիածնում Ջեղ պաշտոնակարգության ընթացքում Մեկ ականատես են եղել աշխատանքի հստակ ունեցած Ջեր բժախնիոր, պահանջկոտ վերաբերմունքին, որ հաջողություններ է ապահովել Մայր Կթողի գործունեությանը:

Կոնդակների ընթերցումից հետո Ամենայն
Հայոց Հայրապետը մեծարյալներին հանձնեց

տարերը դուրստեղծում: Անդրադաշտ-
նալը կորցրեցին և դաստիարակու-
թյան ոլորտում Հայ Եկեղեցու կողմից
իրագործվող ծրագրերն են: Մայր Ա-
թոռի իմաստները ընդն աշխարհում
կան հաստատությունների գործու-
նեությունը՝ Լաթոն արքեպիսկոպոսը
մեծապես կարևորել էր երիտասարդու-
թյան հետ տարվող աշխատանքները:

Իր հերթին տիար Ռոբերտ Մարկարյանն իր լավագույն արժեքները հաշույնները փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Կերչին, կարեւորելով կրթության անհրաժեշտությունը, ուրախությամբ կենց. իր այսօր երկու երկրների միջև ակտիվորեն սերտանում է համագործակցությունը կրթության ոլորտում:

Ռեկտորը գահուակալության անդրադարձնելու հետև ընդգծված անադրադարձության կայանքի, ինչպես նաև՝ Ուրուգվայում պետական մակարդակով ձայն ցերչականության 100-դ տարելիցի հիշատակման գործում հայ համայնքի ունեցած կարեւորագույն դերակատարությունը:

4 հոկտեմբերի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելել Գերմանիայի Բունդեսթագի փոխնախագահ Յոհանես Չիլեդինգերի եւ «Կարդինալ Յոֆներ» միության նախագահ Կառլ Շիլեդինգի գլխավորած պատվիրակությունը: Դատավորական կազմում էր նաեւ Կաթոլիկ եկեղեցու Գերմանիայի թեմի՝ կառավարություն հետ կապերի պատասխանատու հայր Յուսեփը:

Լաթան արագանի հյուրերին փոխանցեց Փարեզիս Բ մենայն Քայցդ Կաթողիկոսի ողջույններն ու օրինաթուղ՝ բարձր գնահատելով երկու երկրների միջեւ ձեւապահման համագործակցությունը տարբեր ոլորտներում, եւ հյուրերի խնդրանքով երկկայացրեց Քայ Առաքելական Եկեղեցւոյ պատմական առաքելությունը հայ ժողովրդի կայանով, Քայցդ եկեղեցւոյ այսօրվա ծառայությունը կրթական, տեղիական ոլորտներում, մասնավորապէս երկկայացրեց երկու տարալոկ աշխատանքները: Պատասխանելով Բուլղղարազի փոխիստանի հարցին՝ արագանը խոսեց նաեւ տարա-

5 հոկտեմբերի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոնի պատվիրակությունը:

Պատվիրակությանը հայոց հոգե-
ւոր կենտրոնում ընդունեց Նաթան
արք. Յովհաննիսյանը:

Հանդիպմանն անորոգարձ կատարվեց համաշխարհային ժառանգության պահպանության ուղղությամբ կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքներին եւ Հայաստան այցի նպատակներին:

Այս կապակցությամբ Նաթանս տրաբանկը կարելոտեց կետորիսի առաքելութիւնը, իոտեց Ֆայաստաւոմ եւ այլ երկրներում հայոց տրաբանկ ժառանգութիւյան պահպանութիւյան խնդիրներէի ու մարտահրաժեշներէի մասիւ: Սրաբանկ հայրը Նաե մառահայրութիւն հայտնեց մի շարք երկրներում ինչպէս ցրիստոնէական ժառանգութիւյան, այնպէս եւ դրա կրոնական-ազգային ինքնութիւյան ոչնչացման փաստերի առնչութիւյամբ:

Համաշխարհային ժառանգության կենտրոնի պատվիրակության անդամները եւս արձանագրեցին, որ այցը Հայաստան սկսում են Մայր

«Կարդինալ Նյոֆներ» միության անդամներին



Ծաշրջանում տիրող իրավիճակի մասին:

«Կարդիսալ Յոֆներ» միությունը, որի անդամները Գերմանիայի Բուրնեսթադի Զրիստոնեա-դեմոկրատական եւ Զրիստոնեա-սոցիալիստական խմբավորումներինց են, ստեղծվել է 20 տարի առաջ։ Միության նախագահի խոսքով՝ իրենց

Նպատակն է քրիստոնեական առաքելություն իրականացնել հասարակական և քաղաքական դաշտում, ինչպես նաև սերտ հարաբերություններ հաստատել քրիստոնեական տարբեր եկեղեցիների հետ, ինչի միտված էր Մայր Աթոռում կայացած հանդիպումը:

Համաշխարհային ժառանգության կենտրոնի դասվիրականը



Աթոռ այցելությունից, կարելուրեցին կրոնական ժառանգության պահպանության պարագայում համագործակցությունը կրոնական կառույցների եւ կազմակերպությունների հետ:

2րույցի ընթացքում Նաթան արքեպիսկոպոսը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությունն ու պատմական արժանատիությունը, տե-

ղեկացրեց Մայր տաճարի ամրակայման ու վերականգնողական աշխատանքների ընթացքի մասին՝ դրանց արդյունավետ կազմակերպման գործում կարևորելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ քին. Կարապետյանը:

Պարգևաբաշխության Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու
պատվո շքանշանները:


Ապա խոսքով հանդես եկան շնորհընկալները: «Մայր Աթոռը ուի դպրոց է, որի միջով են երջանակաբոխներ անցնելու և ինձ հետևողներ են մտնում այն ամենը, ինչ սովորել են այստեղ: Մասնակից եմ եղել այն մեծ ծրագրերի:

րիս ու բարեփոխումներին, որ կատարվում են 2եր գլխավորությամբ եւ 2եր հետետրոյների ջանքերով: Մայր Աթոռը միշտ իմ սրտում է», - կէտց տիկ. Մարինէ Դազարյանը՝ շնորհակալութիւն հայտնելով Կեհապարե Հայրապետին՝ բարձր պարգևի համար:

Պրն Տաճատ Վարդանյանը, ով ներկայումս իր

օգտակարությունն է բերում Հայաստանի աստվածաշնչական ընկերությանը՝ հայտելն Աստվածաշնչի հանրագիտարանի խմբագրման գործում, գիտնականության և երախտագիտության զգացողով անդրադարձավ Մայր Կնոթուն և Հայ Եկեղեցու այլ կառույցներում իր ծառայության տարիներին՝ պատրաստակամորեն հայտնեցով միշտ իր կարողություններն ու պայս ունեւ Հայ Եկեղեցու պայծառությանը։ Այս առիթով մտավորական հայրորդի պապական թերիտաւոր սերնդին. «Հավատարմություն և կարիպծություն մեր Եկեղեցու, մեր Իրեղեցու առաջնորդներին, իկըսւ իկըսւ, մեր սերունդներին, մեր զայիիկ համակապաղադի հարատւաւթյուն և հավերժութիւն։»Մեկը ունեւ հայիւնեակնականության երկու զուպական՝ հարոնեւ և Եկեղեցի։

Այնուհետև, ներկայությունը իր պատգամով բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ճիսհատաճշգրիտ ակտրուալությունով ներկեցյալան սպասարկու՝ զով իրենց ծառայությունը բերած աշխարհակենտրոնի վաստակելի՝ Լորին Սպարությունը նշեց, որ ուր է ուր պարտ նրանց լինեն, պարտակույմ են մնալ Մայր Աթոռի զավակներն ու սպասավորները, իսկ չստառագվողներն ու պաշտպանները: Հաճախորդան ընթացքով ազգային եղզ ու պարի կատարումներով հանդես եկան Երեանի Լոր Լորան և Էջմիածանի՝ Հրայր և Սյուզան Թուֆաջյան հայրույցաջ տներն սաները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼՏՄԻՌՈՅԻՆՆԵՐՆԵՐԸ՝ ՈՒՆԻԳՐԱԿԱՆ ՏԱՐԵՐԱԿԻ

Սկիզբը՝ թիվ 16, 18

Երկրորդ համաշխարհային պատմական իրադարձությունների մեջ ուրվագծվում է Դրոյի կերպարը. «... այդ պատմությունը դառնում է <...> Հունիկների մատյանի ամենալուր հատվածներից մեկը»: Այսինքն՝ այդ մասին ավելի ցածրածայն էին խոսում, որովհետև վտանգավոր էր: Մեր առջեւ Դրաստամատ Կանայանն է՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարարը, խորհրդային իշխանությունների կողմից հետապնդվող ազգային գործիչ, ի վերջո, հիւլեղյալ քաղաքի կազմում ձեռավորված Հայկական լեգեոնի միջոցով հորհրդային Հայաստանն ազատագրելու կոչված խելթը: Դրոյի հետքերը Ռուսիայի հայկական համայնքում շատ են, եւ ահա քեռայր Սահակ Շեթանյանը պատմում է նրա զենքերի, նրա իշխանական իշխանության մասին: Իսկ այդ անունը հայրենասիրության խորհրդանշան է գաղթականության համար: Նախ ռուսները բանտարկեցին Դրոյին, ազատեցին 1924-ին, եւ մինչեւ 1944-ը նա մնաց Ռուսիայում, 1935-ին նա ամուսնացավ ծնունդով Ղարաբաղի Նուխիից Գայանեի հետ, ով ապրեց 105 տարի եւ մահացավ Բոստոնում 1966-ին: Հեղինակն անգամ ինչու է Դրոյի անունը 2000 թ. մայիսի 24-ն Հայաստան տեսափոխելու եւ Ապարանում ամփոփելու փաստը: Այստեղ ավելի է սրվում պատմության ժառանգորդական կապը պապի ու թոռան միջեւ: Պապը բողոքում է թոռան գրելու ցանկությունը՝ «հույս ունենալով,

որ եւ կլինեմ այդ իրադարձությունների պատմիչը»: Խորհուրդն էլ հետն է. «Ով որ տառապեցնված էր կրկնապատմությունը եղածին պես ըսել, այլ իր սեփական պատմությունը կըսե»: Հեղինակը եւս, ինչպես նշեցինք, ի սկզբանե իրեն պատմիչի դեր վերապահելով, գրում է. «Ինձ՝ պատմիչիս համար բավական ղեկավար է պատմության թելը պահելը»:

Դրոյի շուրջ Հայաստանի Առաջին Հանրապետության վտարանդի ղեկավարներն էին, ովքեր դեռեւս հույսեր էին կապում Սերի ղաշնագրի հետ: Այստեղ հայոց պատմության նորագույն շրջանի բարդ էջերն են, ուր եւ շարադրանքն առավել դառնում է պատմավիպական: Ուրվագծվում է Դրոյի ստեղծած Հայկական լեգեոնի պատմությունը: Լեգեոնականները բռնություն էլ գնդակոծեցին՝ առանց Հայաստան հասնելու: 1941-ին Լեգեոնի կազմում շուրջ 8000 կամավորներ էին, հիմնականում՝ ռազմագերիներ: Որպես Հայկական լեգեոնի ռազմիկներ՝ նրանք համագետես կրծքին գերմանական թեւաբաց արծիվն էր, իսկ բազուկներին՝ հայկական եռանկյուն ժապավենը:

Գիրքն ասես գրված լինի տեղատվության ու մակընթացության կշռույթով, որ տարրերով էլ է հիմնականում 1915-1945 թվականների միջեւ՝ երբեմն հզոր ալիքներ նետելով մեկ դեպի ավելի խոր անցյալ եւ մեկ՝ մինչեւ մեր օրերը: Հեղինակի դիտման կետը ժամանակային վերջին սահմանն է: Իսկ «Հունիկների մատյանի» շուրջ եղած խորհրդածություններն ասես մի յու-

րահատուկ կրկնաբերմամբ կարգավորում են այդ տեղատվությունն ու մակընթացությունը:

Հայոց հայրենիքը մշտական ուղեկից է. հնչում են քաղաքների ու գյուղերի անունները՝ որպես կորած բանաստեղծության տող, հեռացող մեղեդի, որ կանչում են գործավոր մի ուժով, որովհետեւ քո՛ն են, իսկ դո՛ւ՝ իրե՛նցը: Արյան այս հարազատությունը նրան հասցնում է մինչեւ Գրիգոր Նարեկացի՝ այնտեղ «Ողբերգության մատյան, այստեղ՝ Հունիկների մատյան»: Եվ դատողությունը՝ «ինչպես մարդիկ են ծնվում մարդկանցից, գրքերն էլ գրքերից են ծնվում»:

Ու խորիք ծնողաբանություն՝ Աֆիոն Գառնիսարում ծնվեց պապը, իսկ Տրապիզոնի Գյուշանա գյուղում՝ Միսաք Թուռաբյանը: Հանդիպման վայրը Նույնն է՝ 1945 թ. մարտի 6-ի փողոց, թիվ 9: Հիմա արդեն խորքից բացվում են Տրապիզոնի հայերի ջարդի մանդանները, խորքից հատուկանում է Թուռաբյանի վրեժը, որպեսզի «Նեմեսիս» ծրագրի շրջանակներում Կոստանդնուպոլսում վերջ տան Բահրութիան Ֆիվանշիին:

Իսկ վրեժը պիտի հասունանար, որովհետեւ ոչ միայն ժողովրդին հայրենագրվում էին, տիրապետում նրա ունեցվածքին, աքսորում, սպանում ու քննաշնորհում, այլեւ գողանում էին վերջին հույսը՝ «ովքեր ցանկանում են, կարող են երեխաներին թուրքական ընտանիքներին հանձնել, բայց երեխաները նախ պիտի հանձնվեն բանակին, որն էլ հետո նրանց պիտի տեղաբաշխի՝ այսպիսով ծնողներին արգելելով իմանալ երեխաների նոր ընտանիքների ինքնությունը»:

Թեեւ Թուրքիայի ռազմական առյառ 1919-ի մայիսի 22-ին միաձայն վճիռ կայացրեց ջարդերի ղեկավարներին ենթարկելու մահապատժի, բայց վճիռը չիրագործվեց: 1919-ի հուլիսի 5-ի համաձայնագրի մի որոշմամբ դատարանը հանցավոր ճա-

նաչեց մեծ վեզիր Թալեաթին, ռազմական նախարար Էնվերին, ռազմածովային նախարար Ջեմալին, կրթության նախարար եւ հատուկ միավորումներ ստեղծող Լազգեմին, Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին ու Բեհաեդդին Շաքիրին: 1915 թ. ապրիլի 24-ին հայ մտավորականությանը շուրջկալներին ենթարկված Օղուզ բեյը 1920 թ. փետրվարի 9-ին դատապարտվեց 5 տարվա բանտարկության, մյուս հանցագործները կազմակերպված հեռացան երկրից:

Պատժի վճին իրականացրին «Նեմեսիս» ծրագրի մահապարտները: Պապը բարեխղճորեն գրանցում էր ահաբեկությունների օրն ու թիվը: Պապի հետ մեկտեղ նրա քեռակալ ու հեղինակի կնքահայր Սահակ Շեթանյանը գիշերներ են լուսացրել սույն գաղտնագրության վրա՝

1. Սողոմոն Թեփեղյան՝ Թալեաթ փաշա, 1921, 15 մարտ, Բեռլին,
2. Արշավիր Շիրակյան՝ Սադիկ Հալիմ փաշա, 1921, 6 դեկտեմբեր, Դոմ,
3. Ստեփան Շաղիկյան՝ Ջեմալ փաշա, 1922, 25 հունիս, Թիֆլիս,
4. Արամ Երկանյան, Արշավիր Շիրակյան՝ Բեհաեդդին Շաքիր, 1922, 17 ապրիլ, Բեռլին,
5. Արամ Երկանյան, Արշավիր Շիրակյան՝ Ջեմալ Ազմի, 17 ապրիլ, Բեռլին,
6. Արամ Երկանյան՝ Ֆաթալի խան Խոյսկի՝ 1920, 19 հունիս,
7. Միսաք Թուռաբյան՝ Բահրութիան Ֆիվանշի, 1921, 18 հուլիս, Կ. Պոլիս:

Հիշվում է 1896-ի օգոստոսի 26-ին 25 նվիրյալներով Բանկ Օթոմանի գրավման պատմությունը, հղովկվում են հերոսական անուններ՝ Արմեն Կարո (Գարեգին Պատմամյան), Շահան Նաթալի: Նույն այս գործիչները կազմում են նաեւ ահաբեկության ենթակա թուրք պաշտոնյաների անունները, որոնցից վերջնական տարբերակում մտնում են այս յոթը եւ հանձնվում «Նեմեսիս»-ին՝ իրականացնելու:

Հարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ թիվ 11, 13-17

Օրբեյանի «Ողբն» իր տեսակի մեջ երկրորդն է Շնորհալու ողբից հետո, ուր հեղինակը գովերգում է հայ ժողովրդի փառավոր անցյալն ու ողբում դժգույն ներկան՝ ապագայի երազներով: Ինչպես Շնորհալու ողբում, այստեղ եւս ընտրված է դիմառնություն ձեռն: Եթե Շնորհալու երկում եղեցիք քաղաքն է հանդես գալիս իբրեւ ողբացող այրի կին, ապա Օրբեյանի ողբում իբրեւ նույնպիսի թագուհի հանդես է գալիս Կաղաքապատի Կաթուղիկեն: Այսպիսով, քերթվածի հեղինակն իր հիմնական ասելիքն ու զգացումներն արտահայտում է իբրեւ «Արքայուհի» անձնավորված Կաթուղիկեի բերանով, որն էլ դառնում է քերթվածի կենտրոնը: «Ողբը» սկսվում է «բարձրագույն եւ ահագին» ձայնով, որը հրավիրում է.

Երթա՛յ ի գուժ աղաղակին...

Ստեփանոս Օրբեյան, Ողբ ի Ս. Կաթուղիկեն, էջ 20

Այդ ձայնից մահաբեր քնից արթնում է Հայոց աշխարհը. բոլորը շտապում են դեպի հայոց տոբ Զորաբը՝ Կաղաքապատ: Նրանց աչքի առաջ բացվում է մի աղեթարք տեսարան.

Տեսի՛ն ի նմա գարբայուհին...

Չմայրն լուսոյ Հայկայ գարմին,
Մերկ, խայտառակ ի բաթոնիկ,
Չանձամբ արկեալ զգործ խաւարին,
Հերքն ճողեալ որպէս կնոսին,
Ստիպէն ցամաք գերդ ըսկընդին,
Չկուրքն բախեր քարամբ ուժգին,

Շայրենասիրական ողբը

Առուք արեանց իջանիկն.

Սոխիդ կուտը նման բրին,

Ցաներ ձեռամբն ի զագաթին:

Երամբ կանանց ճնդը ջայից

Շուրջանակի զնա կարտին.

Դասք երգողաց կանգնեալ կային

Չղամբանական փողոս ածին.

Անաղական ողբով լային,

Չգալարափողընն հնչէին.

Կեսքն շիւան մեծ քարշէին,

Կեսին գվարսիցըն փետէին:

Նույն տեղում, էջ 25

Եկողները, ցնցված այս աղոթեցիկ տեսաբանից, հարցնում են ողբացող Արքայուհուն. Այս ո՞վ, այս ո՞վ ի բազմոցին Նման մեծի արքայուհույն. Այս ի՞նչ, այս ի՞նչ սուգ անհնարին... Նույն տեղում, էջ 27

Ու պատասխանում է որբեյայրի Արքայուհին.

Այս է՛ս, այս է՛ս Ե՛մ Միաձնին.

Իսկ այս՝ որ շուրջ գինեւ պարտէ՛ն

են իմ դստերին, որ նախ ելին...

Եկեղեցիք Հայաստանին.

ժողովեցաք ի միասին

Լնուլ ողբով զաշխարհ քնալին...

Նույն տեղում

Պարզվում է, որ Կաթուղիկեն հանդես է գալիս իբրեւ մայր եկեղեցի, իսկ նրա դուստրերը մյուս եկեղեցիներն ու վան-

քերն են, որոնք նույնպես ամայացած էին եւ եկել էին ողբակից դառնալու իրենց մայր եկեղեցուն:

Խաչատուր Կեչառեցին եւս, անշուշտ, վշտահար սրտով պատմել էր Օրբեյանին Կաղաքապատի Կաթուղիկե եկեղեցու մասին, որը եւ իր արձագանքն է գտել «Ողբի» մեջ.

Այժմ անախտան նման աղբին,
Եղեալ կոխան չորքոտանույն...
Սկիւթացի հորանք թուրքի,
Կամ խայտառակ մանկուցն ևնցին,
Ողբ միշտ կոխան... առնէին,
Տեղիք չարեանց, որք գործէին...
Փոխան բուրացըն ևնցողի
Աղբք եւ ալիշ ի քեզ կուտին...
Հորանք այժից ի քեզ բունին...
Նույն տեղում, էջ 28


Սրտի խոր ցավով է արքայուհի Կաթուղիկեն ողբում իր վիճակը: Իսկ անցյալի եւ ներկայի հակադրությունն ավելի է խտացնում ողբի գույները, ավելի է ընդգծում Կաթուղիկեի լքված, անուշադրության մատուցած լինելը: Տխուր ցավով է Արքայուհին վերհիշում իր երբեմնի վիճակը՝ դրան զուգահեռ անցկացնելով ողբալի ներկալ.

Երբեմն էի որպէս գերկին,
Հիմ հաւասար եմ գտէիին.
Երբեմն արփի արեանծին,
Այժմ խաւար անհնարին...



Երբեմն հարսն առագաստին,
Սաճեալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ օտարոտին,
Անպետ նման հոսեալ ջրին:
Նույն տեղում, էջ 27

Հարունակությունը՝ էջ 10



Սկիզբը՝ թիվ 14-18

4.

Առաջինը, որ «Յոթնապատուկ» գրքից ութսուս քառասուն տեղ չի գտել «Երկերի» առաջին հատորում. ինչո՞ւ. եւ կամ ի՞նչ եղան դրանք՝ առայժմ հնարավոր են ոչ թե ստույգ, այլ հավանական պատասխաններ միայն: Հավանական կարող է լինել, օրինակ, այն, որ դրանք կամ հեղինակը չհավանելով, անկատարություններ համարելով է դուրս թողել 1-ին հատորից, կամ պահել է հաջորդ հատորներից մեկում ղեկելու համար, կամ էլ գլավիտն աննպատակահարմար է գտել դրանց նորից տպագրությունը:

Մի բան հստակ է. «Յոթնապատուկ» գրքի քառասունը նույնությամբ չեն դրվել «Երկերի» 1-ին հատորում, այլ՝ որոշակի ընտրությամբ եւ նոր խմբավորմամբ: Հենց այն իրողությունը, որ հեղինակը փոխել է քառասունի ընդհանուր խորագիրն ու յոթ բաժինների վերնագրերը եւ ավելացրել մի նոր բաժին, խորհել է տալիս, որ նա փոփոխություններ արած կարող է լինել ինչպես բուն քառասունը, այնպես էլ բաժիններ-

րի կազմում դրանք վերադասավորելով: Սա դեռ պետք է ճշտել՝ երկու գրքերի եւ ձեռագրերի շուրջ 1000 քառասուններ համեմատելով:

Վերնագրերի փոփոխությունը դուրսբերվում էր կարելի է նկատել, քանի որ դրանք մեկ բառի փոխարեն արդեն առնվազն երկու բառադրոշմներով բառակապակցություններ են դարձել: Այսպես, 1-ին հատորում քառասունների ամբողջությունն այլևս չունի «Յոթնապատուկ» գրքի սկզբում դրված՝ վերը հիշված քառասուն-նախորդանք քառասուն, ընդհանուր խորագիրը դարձել է «Յոթնապատուկ քառասուններ», որի ենթաբաժինների վերնագրերն են՝ «Քառասուններ հավատապատուկ», «Քառասուններ սիրապատուկ», «Քառասուններ մայրապատուկ», «Քառասուններ հայոց լեզվապատուկ», «Քառասուններ մասիսապատուկ», «Քառասուններ հայրենապատուկ», «Քառասուններ խոհապատուկ» եւ «Քառասուններ լուսնապատուկ»:

Այսինքն՝ հանվել է անորոշ, գրեթե ոչինչ չասող «Չեռապատուկ» վերնագիրը (կարելի է կոտակել՝ հեռավոր մնացած, հեռա-

ՇԻՐԱՅՈՒՆ ԲՎՈՅԱԿՆԵՐԻ ՎՇԽԱՐԸ

Վոր դարձած հայրենիքը նկատի ունենալով, եւ նրա փոխարեն ավելացվել են Շիրազ բանաստեղծին առավել ընդունել երկու վերնագրեր՝ «Քառասուններ հայոց լեզվապատուկ» եւ «Քառասուններ մասիսապատուկ»:

Պարզ համեմատությունից էլ երևում է, որ «Յոթնապատուկ քառասուններ» ընդհանուր խորագրի տակ իրականում ձեռագրվել է ոչ թե յոթ, այլ ութ ենթաբաժին՝ փոփոխված հաջորդականությամբ, նախկին բաժիններում գետեղված քառասունների անկնայտ վերախմբավորումով ու հաճախ էլ՝ նրանց նոր մշակմամբ: Այսպես, օրինակ, ենթաբաժիններում ընդգրկված քառասունների հիմնական կազմը թեմատիկ առումով թե՛ է կայուն է, սակայն դրանցից ոմանք կապված են նաեւ կենտրոնաձիգ թեմային եւ կարող էին տեղ ունենալ նաեւ «Քառասուններ հայրենապատուկ», «Քառասուններ մասիսապատուկ», «Քառասուններ հայոց լեզվապատուկ» կամ այլ ենթաբաժիններում: Այդպիսին է, ասենք, «Քառասուններ հավատապատուկ» ենթաբաժնի հետեւյալ միավորը.

Աստված, թե կաս՝ իմ հայ ազգին այսպես մաքուր միշտ պահիր, Իր գլխի տեր մի լեռնադուր, Իր հավերժ ընդ միշտ պահիր, Որ հայ լեզվի երդեանք մի նոր Ասի չդառնա, Գալիք հողմադարձում էլ մեզ անշեջ հուր միշտ պահիր:

1, էջ 274

Գրեթե հավասար իրավունքով եւ անառարկելիորեն այս քառասուն կարող էր տեղ ունենալ մատնանշված երեք ենթաբաժիններում, որովհետեւ արծարծում է թե՛ հավատի, թե՛ հայոց լեզվի, թե՛ մեր բռնագավթված հայրենիքի խորհրդանշել նման իրավիճակի, թե՛ հայության հարատևության հիմնախնդիրները: Սակայն այս պարագայում էականն Աստու է հավատի հիմնախնդիրն է, որը բացահայտվում է հարակից մյուս խնդիրների զուգահեռ:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ կա տեղաշարժման ենթակա բազմաթեմա քառասունների մի որոշ քանակություն. ընդ որում՝ դրանցից ամեն մեկը կարող էր տեղ ունենալ ոչ միայն հատկապես այդ ենթաբաժնում, այլեւ առնվազն երկու կամ ավելի ուրիշ ենթաբաժիններում: Նշանակում է՝ անգամ հեղինակային թեմատիկ բաժանումը պայմանական է, եւ հեղինակը դասակարգման ու ըստ ենթաբաժինների տեղաբաշխման սկզբունք է դարձրել յուրաքանչյուր քառասունի գլխավոր թեմայի կարելիությունը: Իսկ նույն քառասունում արծարծվող մյուս թեմաներն անկարող տողերը, պատկերավոր արտահայտություններ լինելով, սովորաբար օժանդակ ու բացահայտող դեր են ունենում:

Գրական իրողություն է 1977 թ. «Յոթնապատուկ» խորագրով քառասունների առանձին

գիրքը, փաստ է նաեւ նրանից չորս տարի հետո լույս տեսած «Երկերի» 1-ին հատորի «Յոթնապատուկ քառասուններ» բաժինը, որում նախորդի համեմատ կատարվել են նկատելի կառուցվածքային, առանձին քառասունների լեզվաոճական մշակումներ եւ հեղինակային այլ փոփոխություններ:

Արդ, ուսումնասիրելիս ո՞րը պետք է հիմք ընդունենք, առաջինը, թե՛ երկրորդը:

Առաջինը, գրական փաստ լինելով հանդերձ, հեղինակային վերջին կամքի եւ վերջնական ճշգրտումների արտահայտությունը չէ, քանակաբար, ուրեմն՝ երկրորդը պիտի ընդունենք ուսումնասիրության հիմք եւ առաջնորդվենք նրանով, սակայն հարկ եղած դեպքում չպիտի անտեսվեն նաեւ նախորդ հրատարակությունները, որովհետեւ դրանց համեմատական բնութագրում պիտի ճշտվեն որակական փոփոխությունները եւ հեղինակի պատկերավոր մտածողության շարժման ու ընթացքը:

Եվ քանի որ հեղինակն ինքն էլ կազմել թեմատիկ ենթաբաժիններն ու կատարել քառասունների տեսակավորում՝ ըստ բովանդակության, ապա դա էլ մեզ համար կունենա ուղղորդիչ նշանակություն նրանց բովանդակությունն ու գեղարվեստական յուրահատկությունները բնութագրելիս:

Շարունակությունը՝ էջ 9

Եւ արդ, որովհետեւ այսպիսի յոյս կայ մեր առջեւ, չգրկուենք ողորմածությունից եւ տարագրեալ չեռանակը (Աստու) հետ նմանությունից, այլ ամուր փարուենք [Նրա] ողորմածութեանը, որպէսզի աստուած[ային] սերն ու միությունն ստանանք:

Եղբայրներ, փախչե՛նք անողորմ դատաստանից, երկիւղե՛նք այդ ահասարսուռ սպառնալիքից, «քանի որ անողորմ դատաստան է լինելու նրա հանդէպ, որ ողորմած չի եղել» (Խմբ. Յակ. Բ. 13):

Եւ ձայնն այս ահարկու ո՞ր աղանդեղ սիրտը չի փշրի. ի մտի ունեցե՛ք ողորմութեան շահեկանությունը եւ իմացե՛ք նրանից եկող օգուտները: Անասունների մանն մի՛ անմտացե՛ք, մի՛ սեւեռուէք դէպի որովայնն ու փորը, ամուր բռնելով՝ մի՛ կառչեք ինչ-չին:

Ցանկացած մարդ, որ փշերին է փարում, մարմինն է վնասում, եւ ամեն ոք, որ ազահուրեան փշերն է ժողովում, հոգին է վնասում, որովհետեւ ընչաքանցուղիներն արդարեւ վնասակար եւ հեղձուցիչ փուշ է հոգու համար: Միւս անպտերից ո՞րն է այնքան վարժ քան դու՝ աստուածային սիրող հասնգոյցը, որպէս ազահուրեղներ, որովհետեւ ո՞վ գերում է նրա կողմից, Աստուծո՞ւ մամոնայի հետ է փոխանակում. այդպիսի մարդն արհամարհում է պատուիրանն Աստուծո՞ւ, արհամարհում է [նաեւ] գեղեցիկ սպառնալիքը: Ունեցուածքի հանդէպ սերն ստիպում է արհամարհել [պաշտենական] արքայութեան պատիւը, ո-

ՍԱՐԳԻՍ ԿԱՐՂԱՊԵՏ ՇՆՈՐՀԱԼԻ ԽՐԱՏ ՀՈՂԵԻՈՐ [ՈՂՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ]

որովհետեւ թե՛ (մէկն) արհամարհում է Տիրոջ արքայութիւնը եւ կորստեան որդի Յուդայի պէս ոսկու դիմաց վաճառում է այն, այլեւս պատուի արժանի ի՞նչ պիտի լինի իր եւ իր նմանների համար: Միևնույն տերուեան ազգու [խօսքը] պարզորոշ բացատրում է. «Եթե կարող.- ասում է.- ծառայել Աստծուն եւ մամոնային» (Խմբ. Սատր. 2. 24, Դուկ. ԺԶ. 13), նույն, թէ [նա], որ Աստծու ծառան է, չի կարող ո՛չ ծառայել, ո՛չ հնազանդուել մամոնային: Իսկ ո՞վ մամոնայի ծառան է, Աստծու ծառայութիւնից ի բաց է ընկնում եւ կռապաշտների հետ է դատաստանի արժանանալու, որովհետեւ Քրիստոսի «շրթունքը»՝ առաքեալը Պօղոս, այդպիսիների կռապաշտ է համարում. «Ազահուրեղներ.- ասում է.- կռապաշտութիւն է» (Խմբ. Կորոս. Գ. 5): Ուրիշ ի՞նչ վառ օրինակ է վկայութիւն եւ կամենում լսել այս ծածուկ կռապաշտութեան մասին:

Կուռքեր չես ստեղծում, [չաստուածային] դիակների եւ ուրուականների պատկերներ չես քանդակում, բայց մի՞թէ ոսկին, որդ պատում ես, [կրան] թագաւորական պատկերի որոշվը չի կրում: Եւ դու, թողնելով աստուածային պատկերի փառքը, թագաւորի պատկերն ես պա-

տուի արժանացնում, սիրում եւ պահում, [անգամ] հողի տակ թաղում: Արդե՞ք քո սիրտը ես դրա հետ չի թաղում եւ կեղտանի-կեղտանի իջնում դո՞ւից, [ինչպէս որ] Տերն ասաց. «Որտեղ ձեր գանձն է, այնտեղ կ'լինեն նաեւ ձեր սր-

խանի՛ր. ինչո՞ւ ես տքնում եւ քրտնում, որ վատապէս եւ հողում թաղես: Եթէ մարմնական, կենսական, ծերութեան, հիւսնութեան կամ նմանատիպ կարիքների համար ես անում, ճիշտ չես մտածում, որովհետեւ



որ կարելու բանից զրկե՛ք: Ո՛չ երբեք, այլ կտայ, դեռ մի բան էլ աւելի, միայն եթէ մենք արծաւին խնդրենք Իրեկին: Լսի՛ր Նրան՝ մեր Տիրոջը, եւ վստահ եղի՛ր. «Չեման՛ում եղէք արքայութեանն Աստծու եւ արդարութեանը Նրա, ու այդ ամենը, եւ ոչ միայն, այլեւ աւելին, կտամ ձեզ» (Խմբ. Սատր. 2. 33, Դուկ. ԺԲ. 31):

Տեսնում ես Պարգեատուի առաածեղծութիւնը, տեսնում ես շնորհներն անսխախձ. դու մէկն ես խնդրում, իսկ Նա երկուսը եւ նոյնիպի բիւրապատիկն է պարգեւում քեզ, որովհետեւ բիւրապատիկ ես մարմնական բարիքները, որ Աստուած պատրաստեց մեզ համար, այլեւս ինչ ասել հանդերձեալների մասին, որ անճաշկի են եւ անքննելի:

Գուցէ յուզիչ պատճառներ թերեւ, թե՛ «Իբրեւ մահուան թշուալ եմ պահում փողը, որովհետեւ գրուած է՝ «[Նրանք] իրաւացի կերպով պարտութեան մատնուեցին, իսկ մեր փրկութիւնը պիտի լինի մեր գանձերի շնորհիւ» (Խմբ. Նապ. Լ.Գ. 6): Եւ [ոմանք] պղծում են, թէ սա մահուան մասին է ասուած, որովհետեւ արդարութեամբ ենք տրուելու նրան, իսկ ինչքով փրկութիւն կ'լինի մահուան դատապարտութիւնից:

Եւ սա ասելով՝ նախ եւ առաջ ճիշտ չես մեկնում մարգարէութիւնը: Այժմ կբացատրեմ քեզ խօսքը, որ գրուածներով չզայթակողես:

Շարունակելի
Գրաբարից փոխադրեց
Գեորգ ՄԱՂՈՅՆՆ

Հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին

Հոկտեմբերի 6-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Գաբրելի Բ Ճայրագույն Պատրիարքը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեորգյան հոգեւոր ճեմարանի ղաղիկոմ տեղի ունեցավ «Սուրբ Գրիգոր հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովակայում» խորագիրը կրող միջգազային գիտաժողովը բացման արարողությունը:

Գիտաժողովին, որ նախաձեռնել էր Գետկոյնի հոգեդու ճեմարանի է «Ապել և Թամար Մակունկի» մատենադարանի կողմից, մասնակցում էին հայ և օտարազգի 32 պատմա-բան, փիլիսոփայ և աստվածաբան Դժայտաժողովին, Ռուսաստանից, Կրասնոսնից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Կանադայից, Մայր Աթոռի փառաբաններ, ճեմարանա-կաններ և այլ հրավիրյալներ:

Գիտաժողովն սկսվեց Ամենայն
Քայոց Կաթողիկոսի՝ Աստվածաշն-
կի հայերեն տպագրության 350-ա-
մյակի առիթով արքայան կոնդակի
հրապարակմամբ: Այն ընթերցեց
Մայր Դբոնի հոգեւոր-կրթական
հաստատությունների վերատեսուչ
Գեորգ եպյ Սարոյանը:

ՎԱՐԵԳԻԼ Բ ՇԱՌԱՅ ՅԻՄՈՒԽ
ԶԻՒՍԱՐԻ
ՈՂՈՐՄՈՒԹԱՄԱՆ ԱՍՏՈՒԹՅՈՆ ԵՒ
ՎԱՍՈՇԷՆ ԱԶԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՂԵՏ ԵՒ
ՎԱՌԹԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵ ՅԱՅՈՑ,
ՇԱՅՐԱՎՈՅԵ ՊԱՏԻԱՐԷ
ՀԱՄԱԶԳԱՅԷՆ ԱՆՔԱՆԵՇՄԱՐ
ԱՌՈՂՈՆ ԱՐԱՐԱՏԵՍ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՈՐ ԵԿԵՐԵՅՏԻՈՆ
ՄՈՐՈՆ ՎԱՌՈՐԻԿԷՒ ԷԶԻՄԱՇԻ
ԶՐԻԱՏՈՍԱԿԱՆ ՄԻՈՐՈՆ ՌԱՂՈՅՆ
ԵՒ ՕՐԴՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱԿԵՏԱԿԱՆ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՆ
ՎԱՌՈՐԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏԻԱՐԷՈՒԹԵԱՆ ՅԱՅՈՑ
ՄՈՐՈՆ ԵՐՈՍՄԱՐԻՄԱՅ ԵՒ
ԿՈՍՏԱՆՆՈՐԻՈՒՄՈՆՈՅ,
ԱԶԵՐԻՍՎԱՐՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐՈՎՂԵՏԱՅ,
ԷԶԱՆԱՅԻՅ ԵՒ ՄԱՐՎԱՐԱՅԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵԿԵՓՈՆԱՆԱԿԱՆ
ՄՈՐՈՐԱՆ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՆԱՅԵԱՅԻՅ ԿՈՐՈՐԱՅՈՆ ԵՒ
ՊԵՏՈՇՆԵԻՅ ԵՒ ՄԻՐԵՏԵԱԼ
ՀԱՄԱՅԵ ՀԱՄԱՏԵՍԵԱԼ
ՄՈՐՈՎՈՐԵԱՆ ՅԱՅՈՑ
«Լուսավոյ Զով Զփրառա», ամեն-
նիքեան յառապողքեաց»

(Ժամագիրք):
Սիրեցյալ ժողովուրդ հայոց ի Հա-
յաստան, Արցախ եւ ի Սփյուռս,
Այս տարի լրանում է Աստվածա-

շունչ մատյանի հայերեն տպագրության 350-րդ տարեդարձը՝ հայոց կյանքում Զրիստոսի լույսը առատացնելու մեծաշնորհ, աստվածօրհնյալ գործի պանծալի հոբելյանը:

Սուրբ Գիրքը հայախոս դարձավ 5-րդ դարում, երբ Սուրբ Սահակոսը Եփրայիմյանը Աստուծո խոսքը հա- վատարարեց մեր ժողովրդին հասկա- յալի դարձնելու անհրաժեշտու- թյամբ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը ե- րանաշարի Կարդալատիկին հանձ- նարարեց ստեղծելու լիակետի հա- լց գրերի աստեղծման բազմերայիս գործին: Գրերի գյուղից հենո դ- րեր շարունակ մեր վանքերում լու- ամսիր զորիշերը հազար-հազար-

ժամանակ անց ծաղկեցնելու և
նաեւ հայերէն տպագրութիւնը
Աստուծո օրհնութեամբ գրատպու-
թեան գլուխից մի քանի տասնա-
միակ անց՝ 1512 թվականին, Հակոբ

Մեղապարտի կողմից Կենտրոնական լույս ընկալման հայալեզու առաջին գրքը՝ «Ուրուբաթախիդը» սկիզբից ղեկավար հայ տպագրության փառաշուք վոր ավանդելիքի։ Գրքի, ուսման ոգիտողների հանդես անասիլի լույս ընկեցող մեր ժողովուրդը ոչինչ չէր խնայեց, որպեսզի տպագրության ճանապարհով լույսավորողության առաջին տարածվի մեր երկրում։ Հատկապես անխորժեշտություն էր Սուրբ Գրքի տպագրությունը, որի

պատկեց հայալեզու գրականությունը, հարստացավ հոգեւոր եւ գիտական բազմաթիվ արժեքավոր աշխատություններով:

Սուրբ Գրքի տպագրության հոբելանսը այսօր առիթ է հավատավոր հայորդյաց համար՝ երախտագիտությամբ խոնարհվելու հայ գրքի խորը նվիրյալ մշակների պայծառ բիշոպության, նրանց անմահ գործի առջև:

Մեր հորդորն ենք բերում թեմական եւ համայնքային մեր կառույցներին, կրթական ու գիտական հաստատություններին՝ պատշաճ միջոցառումներով ու տոնախմբություններով նշանավորելու Աստ-

«Ամենայն գիրք աստուածաշունչ եւ օգտակարք ի վարդապետութիւն են՝ եւ ի յանդիմանութիւն, եւ յուղղութիւն, եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ Տիմ. Գ 16-17):

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏՈՒԱԼ ԿՈՆԴԱԿԱ Ի 28 ՅՈՒԼԻՍԻ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2016 ԵՒ Ի ԹՈՒԼՆ
ՀԱՅՐԵՆ ՈՒԿԵ
Ի ՄԱՅՐՈՎԱՆՍ ՍՐԵՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՂՆՂ ԽԱՄԱՐԱՒ 963



ներով ընդօրինակեցին Աստվածաշունչ մատյանը եւ նրա առանձնիք գրքերը: Աստուծո խոսքը պարուհիներով, Զրիստոսի մասին պատմութիւններով ընդ ժողովրդի համար դարձավ ամենաթանկ հարստութիւնը ընդոյր գանձերի մեջ: Աստվածաշնչի թարգմանութիւնը տարածմամբ լուսավորեց աշխարհը հայոց, պայծառացավ Զրիստոսի լույսով, հավառքս եւ բացավ, սերը բազմացավ, հոյակաւ առատացավ, շնորհը լիացավ բխեցնելով սեր ժողովրդի հոգու եւ մտքի հորդոհան արգասիքները:

Տպագրության գլուխից հետո, երբ Եվրոպայում սկսվեց տպագրվել մեծաքանակ զրականություն, դժվար էր հավատալ, որ ասպատակությունների ենթարկվող, հալածակների ու ներգաղթյալների մեջ գտնվող մեր ժողովուրդը կարճ

Նպաստակով Դակոր Դ Ջուրայեցի
Կաթողիկոսի կողմից երկրպագ ա-
ռաքվեց Սուրբ Եջմիածնի միաբան
Ոսկան Երեսանցի կաթողապետը
Լուսավորի երեկեցականը կոյուբա-
կան շատ ծանր պայմանների ու
գրկանքների մեջ բազմաթիվ դժվա-
րությունների ու խոչընդոտների հաղ-
թափանքը, օգնություն գտնելու
ակնկալիքով այցելեց եպիոպակա-
ն տարբեր թաղաքներ ու հայաշահա-
քանակալորներ եւ ակնոխցն ջանեց-
րով 1666 թվականին Ամստերդա-
մով հրատարակեց հայերեն առա-
ջին Աստվածաբանությունը:

Սուրբ Գրքի տպագրությունը
նշանակալի հանգրվան եղավ մեր
ժողովրդի ու եկեղեցու պատմու-
թյան մեջ: Հաջորդող տասնամյակ
ներին եւ հատկապես Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնում տպարանի
հաստատումից հետո բազմա-

վածաշունչ մատյանի տվագրության արժանահիշատակ հոբելյանը: Մաղթուն ելք, որ մեր պատմության այս կարևոր իրադարձության հիշատակությունն առավել զորոցանի աշխարհաքաջախոյուն Մերզավակների՝ ամուր պաշտելուն խայտալից հավատքը եւ հավատարմությունը ազգային ավանդներին, որպեսզի Զրիստոսի լույսը շարունակի սիրով, սկիզբունով ու երկակսին շնորհներով լցնել մեր կյանքը:

Մեր աղոթքն է, որ Զրիստոս մեր Տերը Իր օրհնության ու շնորհաց լույսը հանապազ սփռի հայոց աշխարհում, հանրույն Հայ կյանքում և ամենախնամ Իր Սուրբ Աջի իրավունքները պահի հայրենի մեր երկիրը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և աշխարհասփյուռ ազգայն հայոց այսօր ևս հավիտյան: Ամեն:

Այնուհետև բացման խոսքով հանդես եկան Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Զամբարձումյանը եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրէն Արարատ քին. Պողոսյանը:

«Ոսկան Երեւանցու ֆեոմոսէն վեր ժողովորդի համար պատմութեան դժգործի մը շրջափառու անհետարինը հետարավոր դարձրեց: Մինչ այս միայն վանքերում ու եկեղեցիներում են որոշ հարուստ վաճառականների մոտ պահվող Ա. Գիրքն այլեւս դարձավ հասանելի հանրությանը: Անհատ հայ քրիստոնյան այլեւս Սաղմոսները գտաւ կարող էր ունենալ Աստվածաշնչի իր օրինակը են այլ դարձնէ իր ամենօրյա ընթերցանության են խորհրդածության նյութ:»

Մեպոստեփերի 29-ին, Ն. Ս. Ս. Ս. Գաբրելի Բ Շայադուրյանի Պատիվը պիտի մնանայն շաղկապ չափողիկուսի հանդիսապատկերայմ ըն ճկործանման զիտուրյան հախարարը Լեւոն Մկրտչյանի մասնակցութեայմ, Գեղարքյան հոգեւոր ճեմարանի հանդիսութեայմների տրահում տեղի ունեցալ շաղկ պատմութեայմ, շաղկ Նեղեղեւ պատմութեայմ, հայոց լեզու ը գրականութեայմ, ֆիզիկա, քիմիա, կենսաբանութեայմ առարկաների ուսուցիչիք ը դասակարնիք՝ Էւալգուկիս ուսուցիչիք՝ ամենամալ մրցույթիք 2016 թ. հանդիսալոր մրցանակաբաշխութեայմը։

Արարողությունն սկսվեց Տերունական աղթքով, ապա բացման խոսք ասաց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Եովասարյանը:

«Ուսուցչի է իր առաքելության, ծառայության գնահատումը մշտապես եղել և մնալու է Հայ եկեղեցու և նրա առաքնորդի»՝ Ամենայն Հայոց Սուրբապետի ուշադրության կենտրոնում: Հայ միջուկային բազմաթիվ ծրագրերից, միջոցառումներից մեկն է, որի կառավարողն է ազգային դպրոցում ուսուցչին ոգեւորել, արժեւորել նրա կատարած աշխատանքը, գնահատել որպես այդ տարվա մեջ կապազուցող և իրաքել, որ այս կապատաւունքը, իմութւոյնում ու մարդկայեւթում կարողութւոյն տարածքի նաեւ միտա մակնակաթմութեւի վրա: Ուսուցիչը ոչ միայն գիտելիք պետք է փոխանցի աշակերտին, այլեւ կանաքաւորաց դերակատարութւոյն կայել է ունեւա, պետք է լիկի այն կարելոր տղակը, որ պետք է հստակ գաւառում դիկ ժամանակավորի եւ հափիւթանկանի միջեւ», - սասց Կարապետ ստեղակալ:

«Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը



Մրցանակաբաշխությանը ելույթ ունեցավ ՀՀ կրթության ոլորտի գլխավոր պետ Նախարար Լևոն Մարտիրոսյանը: Պրոֆ. Լ. Մարտիրոսյանը ճախագահեց հուզիչ կկատեց այն հանգամանքը, որ միջոցառումը տեղի է ունենում ՀՀ անկախության 25-րդ տարեգիծի ժամանակավում: «Երբ մենք փորձենք գնահատել անկախությունը եւ հասկանալ արժեքները, որոնք բերել են իր հետ մեր կյանքին այս ուր ձեռագրի, թերեւս երկու կարեւորագույն փաստ կշեշտադրուի:

Առաջինը՝ մեր անկախության շքերթի ժամանակ հոգեւոր գնդի շարահյուսւմ էր, որ մնացյալների հետ միասին հպարտորեն քայլում էր: Սոսկում Հայաստանում Կոմբեա-

կան Ս. Եկեղեցին փաստեց, որ ինքն ամբողջական ներկայություն է մեր ոչ միայն հոգեւոր կյանքում, այլև հոգեւոր-ֆիզիկական անվտանգության համակարգում:

Երկրորդը, որն ավելի հզոր է և կարելու է փաստել, որ դա մեկ կողմակալ ծրագրերում էր Ֆայնիստեյնը՝ արդեն մտադրել է լայնածավալ ներկայություններ։ Եթե մենք խոսում ենք ազգային կրթակարգից, պետք է նշենք, որ հայկ տեսակը առանց ինչ կենդեղյոցի. այն պայմանով, որ հայկ տեսակի անբավարարի մասն է, նրա միակ ուարյունն է և հոգեղեն ներկայությունը»,- ասաց ԿԳ նախարարը ընդգծելով, որ դպրոցներում հայպագրական առարկաների ուսուցիչներն ունենալու են առաքելություն և իրականացնելու են հայկական կրթական ծրագրերը։

ՆՈՒՄ. տալիս են տեսակի շարունակության բանալին:

Մրցանակաբաշխության մասնակիցներին ողջունելով՝ նաեւ ՀՀ Աժ Կառավարմամբոր, Աժ գիտություն, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Կարինե Անեյանին՝ անդրադառնալով կրթության ոլորտում Հայ եկեղեցու ստանձնած վիթխարի առաքելությանը, ինչպես նաեւ՝ շաշվերտի վարպետի կերտման հարցում ուսուցչի դերակատարությանը, քրիստոնեական դաստիարակության եւ կրթության ոլորտում արձանագրվող կարեւոր ձեռքբերումներին:

Այսուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ԿԳ Նախարարի կողմից հաղթող ուսուցիչներին հանձնվեցին մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն եւ դրամական պարգեւներ:

Առաջին միջանակը շնորհիվեց քիմիայի ուսուցչին Անտոն Խաչիկյանին (Երեսնյի Ա. Երբնյանի անվան թիվ 118 ավագ դպրոց)։

Երկրորդ միջանակի արժանացան Հայոց պատմության ուսուցչին Հայկանուշ Գրիգորյանը (Արագածոտն, Ոսկեբազու Վրիժ. դպրոց), Հայոց պատմության ուսուցչին Ռուզաննա Խաչատրյանը (Սյունիք, Սիսիանի ավագ դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչին Անհիտո թնոյանը (Արարատ, Վերո թիվ 2 հիմնական դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչին Լիանն Մատինյանը (Լոռի, Վանաձորի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 ավագ դպրոց), Հայոց լեզու և գրականության մասրակի ուսուցչին Տիգրան Մաթարոսյան (Վերադարձ-Նովայի Տիգրան Մաթարոսյան ավագ դպրոց)։

ՆԱԽԻՐԱԿԱՆ ՄԻՋԱԳԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱՅԹՈՒՄ

«...Այսօր Ս. Էջմիածինն ու Պաշտպանությունը, ի գլուխ ունենալով Նորին Սրբությունը, կարևորում են Ոսկան Երեսանցու վաստակը ոչ միայն որպես պատմական մի ղեկավար կամ մշակութային ժառանգության, այլ որպես Պաշտպանության «գնացքը, աշակերտեցնել» աստվածատուր պատգամի իրականացման ճանապարհին իր իսկ՝ Երկնավորի կողմից տրված շնորհի»։ ամանավորապես ասաց հայր Գարեգինը՝ հավելելով, որ աստվածաշնչագիտական գիտաժողովներն առիթ են ընձեռում ես մեկ անգամ քննելու Աստվածաշնչի մատյանն ու ավելի հաստատվելու սրբությանն ուղղված ջանքերը գրեթե մեկ ու կես հարյուրամյակ մատակերցնի անհաջողության, որը, սակայն, 1666 թ. իրենց ամսագրող կնիքում մի շնորհիվ հաջողվեց իրականացնել Սահակ-Մեսրոպյան դպրոցի ոգին կրող արժանի մի տղա՝ Գրիգոր Դ Ջուղայեցի Կաթողիկոսի, Մատթեոս սարկավազ Ծառեցու, Ավետիս Դիմենցու, Կարապետ վրդ. Արքիանցու, Ոսկան վրդ. Երեսանցու եւ այլ երախտավորների, որոնց ընկալմամբ՝ հայերեն Աստվածաշնչի հրատարակությունը սերտորեն շարկապվեց երկու ժողովրդի հոգեմտավոր լուսավորության ու քաղաքական ազա-

րացուցական կազմության փորձերը եւ ներկայիս անկիցները», Զորք Զորքը («Ոսկան Երեսանցու» Աստվածաշնչի հրատարակության դերը Ս. Գրքի հայերեն թարգմանության գործում», Արմեն Մալխասյանը («Աստվածաշնչի քննական բնագրի պատրաստման անհրաժեշտության եւ բնագրական սկզբունքների շուրջ»)։

Առանձին նիստում, համանախագահությամբ Էռնա Մանյա Շիրինյանի եւ Զորք Զորքի, գեկուցեցին Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Կահան եպս. Դավիթյանը («Մաքսիմիլիան Բոննեի» Գործը Դավիթյանի վերծանում»), Անի Շատան («Եսթերի գիրքը հին թարգմանություններում, հունարեն բնագրի ծանոթությունները հայերեն, վրացերեն եւ լատիներեն թարգմանություններում»), Գեորգյան հոգեւոր ճեմարանի տնօրէն Գարեգին վրդ. Դամբարձումյանը («Իմաստություն, Աստուծո հանդէպ երկուրդ, երջանկություն. Սիրացի գրքի աստվածաբանական ընթերցում»), Սամուիլ Մաքսակաճումը («Մկրտիչական Աստվածաշնչի առաջին հրատարակությունները», Ներսէս վազգ Բախանա Ներսէսյանը («1246 թվագրվող Պողոսի թղթերի հայերեն մի ձեռագիր, որ Եփրեմ Զորագեցին կնիքել է գր. Ջոզեֆ Դ

Արսիին 1829 թ. ապրիլի 4-ին») եւ Նեյի ժամկոչյանը («Ավետարանական առակների աստվածաբանական վերլուծություն»)։

Մյուս զուգահեռ նիստին, համանախագահությամբ Արարատ քնն. Պողոսյանի եւ Արամ Մարտիրոսյանի, գեկուցեցին Անի Շնչյանը («Ոսկան Երեսանցու Աստվածաշնչի պատկերազարդման համակարգը»), Դավիթյանի Աղաբախյանը («Աստվածաշնչի հայերեն տպագրության նյութական հովանավորները»), Լուսինե Վարդանյանը («Աստվածաշնչի՝ Ոսկան Երեսանցու եւ Միսթաք Սեբաստացու հրատարակությունների հիշատակարանների համեմատական քննություն»), Տաթևիկ Վարդանյանը («Մատթեոսի Ավետարանի բառապաշարի պարզ բառերի ծագումնաբանությունը»), Օբսանա Կարապետյանը («Պատմաէվագրականական քննություն»՝ հայտնաբերվող հայերեն աստվածաբանական բնագրերի (գրտ. Ս. Մ. Աստուծոյանի թիվ 2267 ձեռագրի) եւ Նազեկի՝ Դարիսյանը («Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ առկա ճարտարապետական բառերի իմաստային եւ ձեռքի նշանակության խնդիրը»)։



բազան Ավանդության հանդէպ ունեցած վստահության մեջ։

Հայր սուրբ իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ գիտաժողովի կայացման համար ցուցաբերված օժանդակության համար։

Իսկ Արարատ քնն. Պողոսյանն անդրադարձավ Աստվածաշնչի հայերեն տպագրության 350-ամյակի խորհրդին՝ նշելով. «Հիշումով, հայերեն Ս. Գրքի առաջին տպագրության 350-ամյակը հանդիսավոր առիթ է ոչ միայն արդարորեն վերազնադատելու հայկական պանծալի մշակույթը տպագրության մարմանը ու նրա ստեղծագործ գոյատևումը ապահովող երանելի մշակույթի փառասլաց, այլ՝ անձնավորապես ոգով վերաբծեցող Ս. Գրքի թարգմանության մշակութային ակնթիլի մարմնը։

...Գրեթե բոլորիս գլուխը եւ հայ գրատպության սկզբնավորումից ի վեր՝ հայերեն Ս. Գրքի տպագ-

րության հասնելուն ուղղված գործընթացների հետ...

Ոսկան Երեսանցու կյանքը եղավ պայքար հանուն լույսի, հանուն առավել կյանքի, հանուն հայ դպրության, գրի ու խոսքի հավերժության»։ Եռօրյա գիտաժողովի նիստերն անցկացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանում՝ «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում։ Գիտաժողովի փակումը տեղի ունեցավ Սրբոց Թարգմանաց տոնի Օշականի՝ Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատուն» գիտամշակութային կենտրոնում։

Լիագումար նիստը վարեց Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եգնիկ արք. Պետրոսյանը։

Չեկուցներով հանդէս եկան Ս. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան գլխավոր ավանդակի Գեորգ Տեր-Վարդանյանը («Հայերեն Աստվածաշնչի ձեռագ-

րությանն ուղղված ջանքերը գրեթե մեկ ու կես հարյուրամյակ մատակերցնի անհաջողության, որը, սակայն, 1666 թ. իրենց ամսագրող կնիքում մի շնորհիվ հաջողվեց իրականացնել Սահակ-Մեսրոպյան դպրոցի ոգին կրող արժանի մի տղա՝ Գրիգոր Դ Ջուղայեցի Կաթողիկոսի, Մատթեոս սարկավազ Ծառեցու, Ավետիս Դիմենցու, Կարապետ վրդ. Արքիանցու, Ոսկան վրդ. Երեսանցու եւ այլ երախտավորների, որոնց ընկալմամբ՝ հայերեն Աստվածաշնչի հրատարակությունը սերտորեն շարկապվեց երկու ժողովրդի հոգեմտավոր լուսավորության ու քաղաքական ազա-



րացուցական կազմության փորձերը եւ ներկայիս անկիցները», Զորք Զորքը («Ոսկան Երեսանցու» Աստվածաշնչի հրատարակության դերը Ս. Գրքի հայերեն թարգմանության գործում», Արմեն Մալխասյանը («Աստվածաշնչի քննական բնագրի պատրաստման անհրաժեշտության եւ բնագրական սկզբունքների շուրջ»)։

Հոկտեմբերի 7-ին գիտաժողովի նիստերն անցկացվեցին «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում։ Համանախագահությամբ Կահան եպս. Դավիթյանի եւ Գեորգ Տեր-Վարդանյանի՝ տեղի ունեցած համատեղ նիստում գեկուցվեց երկուսն ունեցած Ազատ Բողոքյանը («Ս. Գրքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակական ծրագրերում»), Փիթր Զառնի («Աստվածաշնչի հայերեն թարգմանության խմբագրության աստվածաբանական եւ հռետորական խնդիրներ»), Արամ Մարտիրոսյանը («Աստվածաշնչի մեթոդները՝ Կանոնագիր հայոց»-ի վաղուցյան մեջ)։

Չուգանեց նիստում, համանախագահությամբ Ներսէս վազգ Բախանա Ներսէսյանի եւ Փիթր Զառնի, գեկուցեցին Նատիա Սիրո-

Արսիին 1829 թ. ապրիլի 4-ին») եւ Նեյի ժամկոչյանը («Ավետարանական առակների աստվածաբանական վերլուծություն»)։

Մյուս զուգահեռ նիստին, համանախագահությամբ Արարատ քնն. Պողոսյանի եւ Արամ Մարտիրոսյանի, գեկուցեցին Անի Շնչյանը («Ոսկան Երեսանցու Աստվածաշնչի պատկերազարդման համակարգը»), Դավիթյանի Աղաբախյանը («Աստվածաշնչի հայերեն տպագրության նյութական հովանավորները»), Լուսինե Վարդանյանը («Աստվածաշնչի՝ Ոսկան Երեսանցու եւ Միսթաք Սեբաստացու հրատարակությունների հիշատակարանների համեմատական քննություն»), Տաթևիկ Վարդանյանը («Մատթեոսի Ավետարանի բառապաշարի պարզ բառերի ծագումնաբանությունը»), Օբսանա Կարապետյանը («Պատմաէվագրականական քննություն»՝ հայտնաբերվող հայերեն աստվածաբանական բնագրերի (գրտ. Ս. Մ. Աստուծոյանի թիվ 2267 ձեռագրի) եւ Նազեկի՝ Դարիսյանը («Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ առկա ճարտարապետական բառերի իմաստային եւ ձեռքի նշանակության խնդիրը»)։

ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՄԵ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սիք. Կարմիրգյուղի թ. 2 միջն. դպրոց), հայոց (Եգնիկ եւ գրականության ուսուցչուհի Արքիմեդ Սարգսյանը (Շիրակ, Վահրամաբեկի միջն. դպրոց), քիմիայի ուսուցչուհի Մարիա Գրիգորյանը (Լոռի, Վանաձորի Սալաթ-Նովայի անվան թիվ 10 միջն. դպրոց), ֆիզիկայի ուսուցչուհի Նինել Մկրտչյանը (Վայոց ձոր, Վայքի քաղաքային վարժարան), դասավանդող Բուզանա Վարդանյանը (Երեսանցի թիվ 116 հիմնական դպրոց)։

Երրորդ մրցանակը փոխանցվեց Հայոց պատմության ուսուցիչ Վարդան Աշյանին (Երեսանց, Գ. Եսինի անվան թիվ 182 ավագ դպրոց), Հայոց պատմության ուսուցչուհի Աննա Բաղդասարյանին (Կոտայք, Լեռնանիստի միջն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Ալվինա Մկրտումյանին (Արմավիր, Թաթևիկ միջն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Գագիկ Վարդանյանին (Գեղարքունիք, Ներքին Գետաշենի թիվ 1 միջն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Լարինե Նաթինե Վարդանյանին (Լոռի, Վանաձորի, թիվ 28 հիմնական դպրոց), հայոց (Եգնիկ եւ գրականության ուսուցչուհի Նաիրա Չեխայանին (Արարատ, Արմավիրի միջն. դպրոց), հայոց (Եգնիկ եւ գրականության ուսուցչուհի Անի Վանյանյանին (Լոռի, Ստեփանավանի ավագ դպրոց), հայոց (Եգնիկ եւ գրականության ուսուցչուհի Զորք Զորքի (Կոտայք, Լեռնանիստի միջն. դպրոց), ֆիզիկայի ուսուցչուհի Անուշ Մանուկյանի (Վաղարշի թիվ 3 հիմնական դպրոց), ֆիզիկայի ուսուցչուհի Վարդուհի Ծատրյանին (Արմավիր, Թաթևիկ միջն. դպրոց), կենսաբանության ուսուցչուհի

Ավետյան Սարգսյանին (Սյունիք, Սիսիանի ավագ դպրոց), դասավանդող Մարիա Սարգսյանին (Արմավիր, «Եռնեկյան հանրակրթական դպրոց»), դասավանդող Մերի Թոնուկյանին (Երեսանց, Վարդանյան կրթահամալիր)։

Շնորհաբաշխության հետո հանդէս եկավ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցանակաբաշխության բարեբար Սիլվա Տեր-Ստեփանյանը (ԱՄՍ)։ «Մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եղավ եւ է Հայր Աստուծո մեծագույն պարգևը ողջ հայության։ Այն շարունակելու է մնալ ոչ միայն մեր հայ հավատքի ուղեցույցը, այլ նաեւ մեր սուրբ արքայուրդը»,- իր խոսքում նշեց օր. Տեր-Ստեփանյանը՝ մաղթելով, որ մշտապես պանծացվի հայերի հույսի, լույսի եւ հավատքի սուրբ կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Շնորհակալական խոսք ասաց նաեւ առաջին մրցանակին արժանացած ուսուցչուհի Անուշ Խաչկյանը։

Տերմուխի ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդէս եկավ նաեւ «Նոր անուններ» համույթը՝ ղեկավարությամբ Սիլվա Մեքինյանի։

Մրցանակաբաշխության արարողությունը եզրափակվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ խոսքով։ Վեհափառ Հայրապետը, ողջունելով ներկաներին, իր գնահատանքը փոխանցեց լավագույն ուսուցչի պատվին արժանացած ուսուցչուհիին՝ շնորհակալություն հայտնելով իրենց համաուցած բարի եւ ազնիվ ծառայության մասին։

Նորին Սրբությունն ուսուցիչներին համեմատեց ավետարանական բարի սերմնացա-



լի կերպարի հետ, ովքեր հայոցիների հոգիներն ու միտքը հերկում են եւ սերմնում բարի հույսը, ապա հոգ տանում ու խնամում, որ այդ հույսը ծիլ տան եւ բարի արդյունք բերեն հայ ժողովրդին ու հայրենիքին։

«Ժողովը ենք տալիս Աստուծո, որ այդ աշխատանքն իրականացվում է սիրով ու նահանգանկությամբ։ Դրա վկայությունը տեսնեք նաեւ լեզուներ, երբ այցելեցիք Լեռնային Ղարաբաղ, հանդիպեցիք հայոց բանակի քաջարի մարտիկներին։ Հայրապետը զգացրեք այն ոգու եւ գիտակցության համար, որով նրանք իրենց ծառայությունն էին բերում մեր հայրենիքին եւ ժողովրդին։ Մենք այս իմաստով նույնպես մեր գնահատանքը ուսուցչուհիներին ենք բերում ձեզ։ Ուսուցիչը մեր մշտական աղոթքներում է, որ նրա աշխատանքով առատաճան շնորհները

մեր զավակներին կանցնու, այդ շնորհներով վերջիններս էլ իրենց հերթին զարդարեն հայ կյանքը եւ հայոց անդադատները»,- ասաց Վեհափառ Հայրապետը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց նաեւ տիար Լեւոն Մկրտչյանին՝ շնորհավորելով նրան ԿԳ նախարարի պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ։ Նորին Սրբությունը բարձր գնահատեց Եկեղեցական կրթական կառույցների եւ ԿԳ-ի միջեւ գործադրությունը, որ պսակվում է գեղեցիկ նախաձեռնություններով։

Վեհափառ Հայրապետն իր օրհնությամբ բերեց նաեւ մրցանակաբաշխության երկարամյա հովանավորների՝ Սիլվա եւ Իրմա Տեր-Ստեփանյան քույրերին, ինչպես նաեւ՝ ԶԴԿ տնօրեն Վարդան եպս Նալա-սարգյանին։

ՀԱՎՈՐ ՕՏԱԿԱՆԻ ՓՈՔԸ ԱՐՉԱԿԸ՝ ԲԱՐՔԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Սփյուռքահայ գրողները, պատկերելով իրենց կորցրած ծննդավայրն ու նրա մարդկանց, ներկայացնելով կենցաղն ու բարքերը, նպատակ ունենին օտար երկրների տակ ապրող հայրենակիցների սրտում բորբոք պահել հայրենի տան հիշատակները, իրենց սերն ու կարոտը, վերադարձի հույսը, իսկ գալիք սերունդների համար կենդանագրել կորսված հայրենիքի պատկերը եւ այն վերադարձնելու հավատն ու ձգտումը: Այդ նպատակին յուրաքանչյուր գրող իր երկերում հասավ իրեն բնորոշ գեղարվեստական ձեւերով ու միջոցներով:

Հակոբ Օշականի իր պատմվածքներով, «հեքիաթներով» է «ծանր վեպերով» ամենից առաջ մոռացումից փրկեց իր ծննդավայր հայոց գյուղը: Թեեւ Օշականի պատկերած գյուղն Արեւմտահայաստանի գյուղը չէր (*Օշականը (Հակոբ Զյուլֆեյան) ծնվել է կյանքի 28 տարին ապրել է Թուրքիայի Նիկիո գավառում, պատկերել է այդ գավառի հայ գյուղերում (Նաեւ Բուրսա քաղաքում) ապրող մարդկանց կյանքը*), այն «հայրենիքի (Արեւմտյան Հայաստանի) գյուղից շատ բաներով տարբեր էր՝ պայմանավորված թուրք միջավայրի ազդեցությամբ բարքերի փոփոխություններով», բայց «գրողը լրացնում, ամբողջացնում էր ընդհանրապես Թուրքիոյ մեջ ապրող հայ գյուղացիության պատկերը» (*Վազգեն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 59*): Հայ գյուղն իր կենցաղով, վարք ու բարքով, հոգեկան եւ բարոյական աշխարհով դարձավ Օշականի գրականության առանցքը: Օշականը լավ ուսումնասիրել, ճանաչել ու

սիրել է հայ գյուղը, հայ գյուղացուն, նրա նպատակը հայ գյուղաշխարհի ու նրա մարդկանց պատկերումն է, այդ աշխարհի բարքերի վերհանումը: Նրա գեղագիտական հայացքների համակարգում սա կարեւոր խնդիրներից էր. «Բարքերուն հանդէպ անոր զգացածը տառացի տարփանք մըն է, պաշտամունք մը գրեթէ»,- ասում է Օշականը հենց իր մասին (*Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականության, հ. 10, 1982, էջ 149*): Գրելով, որ «Խոնարհները» շարքն աչքի է ընկնում «բարքերէ իր նիհարութեամբ»՝ Օշականն ավելացնում է, որ շարքի յուրաքանչյուր հերոսի կյանքի ամեն մի գիծն առնված է գյուղի ընդհանուր բարքերից (*տե՛ս Նույն տեղում, էջ 110*): Անորադառնալով Օշականի ստեղծագործության այս առանձնահատկությանը՝ գրականագետ Կ. Աղաբեկյանը գրում է. «Պատմվածքների սյուժեները զարգանում են ո՛չ միայն բարքերի ուղեկցությամբ կամ հարեւանցի նկարագրությամբ, այլեւ ուղղակի դրանց տիրական ազդեցությամբ» (*Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 71*): Գրականագետ Վ. Գաբրիելյանն ընդլայնում է խնդրի սահմանները՝ գրելով. «Այդ հերոսների կյանքի առօրյա պատմությունների ու հոգեկան թաքուն ապրումների միջոցով Օշականը պատկերում է Նաեւ բարքեր, սովորություններ՝ փորձելով հայտնաբերել ոչ միայն մարդկայինը, այլեւ այն, որ «հայեցի» է, «հայ հոգին» է» (*Վազգեն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 55*): Գրականագետն այն կարծիքին է, որ Օշականի իր «Համապատկերը» ստեղծե-

լիս առաջնորդվել է Նույն մղումով՝ «պատմել արդեն անցյալ կորուսյալ կյանքի» բարքերի ու հայ ոգու մասին, իր ժողովրդի ստեղծած արժեքների մասին» (*տե՛ս Նույն տեղում, էջ 63*): «Պաշտամունք եւ արտահայտություն հայ հոգվոյն» (*մեջբերումը միջնորդավորված է՝ Լ. Մաքսկանյան, Գրական քննադատությունը «Նավասարդ» եւ «Մեխյան» պարբերականներում, Եր., 1988, էջ 16*) դրույթը, որ մեխյանականների («Մեխյան» ամսագրի (1914 թ.) խմբագիր-հեղինակները (Կ. Չարյան, Դ. Վարուժան, Զ. Զյուլֆեյան (Օշական), Ա. Տատուրյան եւ այլք) առաջնային սկզբունքն էր, որը պետք է պահպաներ յուրաքանչյուր հայ գրող, շարունակում է կարեւորվել Նաեւ հետեղեռնյան տարիների պոլսահայ, ապա եւ սփյուռքյան գրականության մեջ:

Օշականի յուրաքանչյուր պատմվածք՝ իր ուրույն շեշտով ու գունագեղությամբ, դարձավ իր գյուղի բնաշխարհի, սովորությունների ու բարքերի մի կենդանի պատկեր, իսկ դրանց ամբողջությունը՝ գյուղի համապատկերը: Այս խնդրին Օշականը հաջողությամբ կյանքի կոչեց Նաեւ «ծանր վեպեր»-ում, որոնցում «Վիպասանը կորուստ է փրկված է Նաեւ մեր քաղաքը՝ ուր այնքան հարուստ ենթահող մը կայ բարքերու (Պոլիսը, Գահիրեն եւ այլն...)» (*Շուշիկ Տասնպատկեան, Հակոբ Օշականի վեպը, Պէյրուք, 1994, էջ 35*):

Օշականի արձակը հայ նահապետական գյուղի կյանքի, տոների ու ծիսակատարությունների, բարքերի ու սովորությունների համապատկեր է:




Այս ամենը Օշականի ի ցույց է դնում ոչ թե սոսկ նկարագրությունների միջոցով, այլ հերոսների հոգեբանական բացահայտումների համադրությամբ: Հակառակ դեպքում նա կհամարվեր բանահավաք կամ ազգագրագետ: «Օշական գրել սկսած է ոչ իբր բարքերու հաւաքի մը (Պերճ Պոռշեանց, Շիրվանգաւտ), այլ՝ իբրեւ արուեստագետ մը, որ մարդկային տրաման միայն ունի փառասիրութեան զսպանակ, ինչպէս յանգումի կէտ»:

Եվ այդ «մարդկային տրամա»-յի բացահայտումներն էլ Օշականը իրականացրեց արվեստագետի՝ իրեն բնորոշ գեղարվեստական միջոցներով:

Օշականի իր հերոսների մեջ պատկերեց հայի բնավորության բնորոշ գծերը՝ դրանցում ընդգծելով հատկապես ապագայի նկատմամբ նրա աներեր հավատը՝ ապրել՝ հայացքն ապագայի լույսին հառած: Կերտեց կենդանի եւ բնական կերպարներ, որոնք հիմնականում նրան ծանոթ, իրական մարդիկ էին:

Հարունակությունը՝ էջ 11



Սկիզբը՝ էջ 4

Սպանվում է Նաեւ Թալեաթի գործակալ Հարությունը Սկրությանը, ով կազմել էր 1915-ի ապրիլի 24-ին արտաքսված 300 հայ մտավորականների առաջին ցուցակը: Ենպէս այս հատվածում ընդգրկում է 1895-1922 թթ. ցեղասպանության համապատկերը:

«Շշուկների մատյանում» ոչ միայն շշուկների անձայն խոսք է, այլեւ լուռության խոսք՝ շշուկների լուռ մասը: Այստեղ (6-րդ մաս) համաժամանակյա հոսքով հիշվում են մի քանի տարբեր տարեթիվեր՝ 1949, 1957, 1964, 2005: Անիթը վաղաժամ ծմեռն է, առանձին դեմքեր, որ հիշողությունն այս անգամ տողորում են գյուղի կոլեկտիվացման իրադարձություններով:

Նույն բռնությունները, ունեցրկում, վախը: Եվ այդ ամենի կենտրոնում՝ Ռուս-նիայի ապագա Կենտկոմի առաջին քարտուղար Նիկոլաե Չառլեսյուն, ում Ազգային փրկության ճակատի կողմից անկախություն հռչակելու օրն իսկ ձեռքադրվեցին եւ 1989-ի դեկտեմբերի 25-ին կոշտ հետ մեկտեղ մահապատժի ենթարկեցին: Ինչո՞ւ: Որովհետեւ դաժան բռնություններով էր անցել կուսակցական գործիչ նրա ճանապարհը: Այս կերպարներն իրենց բռն գործունեության ընթացքում շատ նման են՝ կաշվե բաճկոն, կաշվե կեպի, ճոճավոր կաշվե կոշիկներ եւ դաժան անմարդկայնություն:

Չառլեսյուն այստեղ կերպավորվում է կոլեկտիվացման գործի օրերին. իրեն տր-

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԸՆՏ ՈՒՄԻՆԱԿԱՅ ՏԱՐՔԵՐԱԿԻ

ված կուսակցական հրահանգը նա կատարում է սպանությունների եւ աքսորի միջոցով: Այսպես իրար են շաղախվում Հայոց ցեղասպանությունը, Ռուսիայի համայնավարացումն ու դրա հետեւանքները, տարբեր ժամանակ եւ տարբեր իրադրությունների մեջ գործող հերոսներ, բայց բոլորը վիպական ճիշտ կապերի ու կապակցումների մեջ են, որովհետեւ միասնական է պատմում՝ որպես հիշողության մատյան: Ընդ որում՝ անցումները կարող են լինել միեւնոյն գլխի մեջ: Միասնական է Նաեւ կերպարների բացահայտման հայեցակարգը, որ հեղինակն այսպես է բացատրում. «Չգտե՛ս, որ իմ ծերունիների հոգիներում կա ցավ, մեղամաղձոտություն, անբավարար ապրած կյանք, բայց փափոսանք չեմ լսել»: Ահա հերոսներից մեկը՝ Հարություն Ֆրիկյանը, ով հիմնադրում է գործարաններ, ստեղծում մեծ հարստություն, սակայն համայնավարները նրա ունեցվածքը պետականացնում են, նրան ունեցրկում, հասցնում արքայության, անգամ վնդում սեփական գործարանի բակից: Այսքանից հետո նա թեեւ տրորված, բայց մարդկային արժանապատվությամբ է շարունակում իր կյանքի ուղին՝ ընդամենն ասելով. «Դե-

տությունը... լավ չէ»: Շաքարի թագավորի համբավ ունեւ, դարձավ գարեջրասրահների մեծակայքում արդվ բոված ընկույզ վաճառող, գրեթէ մուրացկան, բայց չկտրվեց, որովհետեւ Նախին ունեւորի պես շարունակում էր կուսական ճշունետեւանել: Հեղինակի հիշողության մեջ մնացել է նրա երգրական կոշտ հայերենը: Այդպես կոծիկն դրած կտակի վրա սառած ձեռքերով էլ թաղեցին:

Միտքը նորից գնում է դեպի 1915 թվականը: Վարուժան եւ նրա անվան շուրջ իյուսվող առասպել: Չոհրապ է նրա կողքին մեղմիկ երկրորդ հայ անդամը՝ Վարդգես Մերինգույանը, որոնց աքսորի ճանապարհը Ուրֆայով հասցնում է Հալեւ: Մեջբերում է հատվածներ դեսպանների ու իյուսատուների գրություններից եւ սկզբից առաջ վերջը պատկերում, որ այս դեպքում եւս Նույն Տեր Չորն է, այստեղ՝ Դեյր Է-Չոր, ինչպես իրական տեղանուն է: Ուրվագծվում է Կոմիտասի կերպարը, ով աքսորի ճանապարհին անընդհատ ծիծաղում էր, որ խելագարության քրքիչ էր:

Հարունակելի

Դավիթ ԳԱՊԱՐՇՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Համաշխարհայինը եւ վերածնունդը Փիթեր Բալաբյանի տոնգիայում

Սկզբը՝ թիվ 14-16

Ներկայացնենք պոետի գրչին պատկառնող մեկ այլ ուշագրավ բանաստեղծական դրվագ:

*Լուսն եմ ինչպես հողը մոլեգին
Դիպչում եւ ուժգին սրտիս լարերին:
Լուսն եմ ծայրն անլար գործիքի,
Որ վնասված էր բայլքից թռչունի:*

Բանաստեղծության մեջ պատկերված լարային երաժշտական գործիքը եւ սիրամարգը, որոնք հայոց մշակույթի մեջ թերթուղյալ են ու նրբագեղության ակնառու խորհրդանշեր են, հավասարապես թերի են: Բանաստեղծության երրորդ դրվագը մի հակադրություն է ստեղծում, ինչն ընդգծում է քսաներորդ դարի սկզբում հայերի գլխով անցած փորձությունները: Ընթերցողը լսում է, թե ինչպես է փայտե մուրճը զարկվում գորգի հանգույցներին: Թեեւ այս գործողության շնորհիվ հնարավոր է դառնում ստեղծել վալեի բարձր որակի գորգ, սակայն այդ գործողության ներքին իմաստն այնքան էլ դրական չէ: Գորգին հասցվող հարվածները վնաս են պատճառում դրան, իսկ հարվածների ծայրն արձագանքվում է բանաստեղծության հերոսի գիտակցության մեջ ճիշտ այնպես, ինչպես կարծազանքվեին զանգի չարագույժ զողանքները:

*Չանգը չարագույժ ինչեք մեկ անգամ
Մարմարա ծովի մակերեսության,
Եվ այն պիտի լավեր ամբողջ աշխարհին:*
Ներկայացված դրվագում առկա համեմատության մեջ պատմական հեցնանք է զգացվում: XIX դարի վերջերին եւ XX դարի սկզբներին հայերն անկախություն ձեռքբերելու ակնկալիքով իրենց հայացքներն ուղղեցին դեպի Եվրոպա: Նրանք Արեւմուտքից ակնկալում էին պաշտպանություն ու կարելիցանք: Բայց, երբ օսմանյան թուրքերը 1915 թ. սկսեցին կոտորել հայերին, «բաղաճալիրը Արեւմուտքին» ոչինչ չէր մնում՝ բացի ուսերը թողնելուց: Հավանաբար այս թաքնված իրազեկվածությունը, ըստ որի՝ չարագույժ զանգերի ուժգին զողանքն այդպես էլ չի հասնելու իր հասցեատիրոջը, բացատրությունն է այն կուրուկ բեկման, որն առկա է հետեյակ բանաստեղծական տան մեջ: Այստեղ հերոսն իրեն խորհրդանշական կերպով պարունում է գորգի, ինչպես նաեւ մի անանուն ծաղկի պատվով ծաղկապսակի մեջ: Այնուհետեւ բանաստեղծության գործող անձը գնում է մի ցեխտու ճանապարհով՝ մինչեւ հասնում է անանուխի ընտանիքին պատկանող մի մուգ ծաղկի:



*Մուսուխների խմբին պատկանող
Շաղիկ եւ տեսա, որն էր մուգ գույնի:
Շաղիկը այդ մուգ ծնունդ էր առել
Իմ հեռավոր Հայաստան երկրում,
Իսկ ավելի ճիշտ՝
Արդյանի սեփական հողում:*

Հեռվում մնացած հայրենի երկրի մուգացված զգացողությունը կարծես պահպան է հանդիսանում դրա խորքային առեղծվածի համար: Հարազատ երկրին հնարավոր է հասնել միայն երեակայական ուղեւորության միջոցով: Բանաստեղծության չորրորդ դրվագում բանաստեղծն ուրվագծում է այդ ուղեւորությունը: «Պոետական հերոսն իր քիթը մտցնում է վարդի մեջ: Բալաբյանի բանաստեղծության մեջ բացահայտվում է վարդի յուրաքանչյուր երանգն ու մասը՝ կարծես միվրելով կանաչի եուրյան հետ: Սակայն ինչպես Արշիլ Գորկու ինքնավերլուծությունը չի հանգեցնում հայ տարագրի կյանքի ճառասային վիճակի կարգավորմանը, ճիշտ այդպես էլ Փիթեր Բալաբյանի բանաստեղծության հերոսը կոտորվում է, ինչպես կկոտորվեր վարդի փուշը:

*Մարդն է կոտորվում, մասերի կիսվում
Ինչպես կարող էր փուշը մասնատվել:
Կողմը փշապատ մի ճյուղ է նետել
Շնագայլերի դաժան ումմակի:*

Եթե վարդն իր պաշտպանության համար ստեղծել է իր պսակը, ապա հայ ժողովուրդը դարերի ընթացքում մշակել է իր վարքագծի կանոնները, որպեսզի կարողանա պաշտպանվել արտաքին ագրեսիայից: Ի վերջո Բալաբյանի նկարագրած վարդի

«պսակը չի կարողանում միմյանցից տարբերակել բարեկամներին եւ թշնամիներին ու վերացնում է այն ամենը, ինչ կարող է վտանգել իր միջուկը»: Հատկանշական է, որ բանաստեղծության հերոսն իր ճակատագիրը լիովին նույնացնում է վարդի ճակատագրի հետ ու ամբողջովին անձնատուր է լինում իր վշտին: Ամեն բան ավարտվում է նրանով, որ նա գնում է դեպի սկզբնավարդ, դա միակ տեղն է, որտեղ կարող է ձեւավորվել մի նոր ամբողջություն: Ինչ-որ իմաստով վերջ ներկայացված դրվագը պարունակում է մի պատկեր, որն արտացոլում է հայոց ցեղասպանության հետեւանքները: Բանաստեղծության հինգերորդ դրվագում գործող անձը, գործը մեջքին դրած, առաջ է քայլում, իսկ այնուհետեւ «միավորվում է ամայի հողի հետ»: Ըստ Էուրթյան՝ բանաստեղծական երկի հերոսի ճակատագիրն արտացոլում է քսաներորդ դարի շատ արվեստագետների կացությունը, այն մարդկանց, ովքեր, տեղահան էին արվել Ֆիզիկական կամ հոգեբանորեն, իրենց հետ գրեթե ոչինչ չէին տարել իրենց հարազատ երկրից: Միակ բանը, ինչ նրանց իրենց հետ բերել էին ապաստան տված երկրներ, դա իրենց կյանքի մեռած առասպելների մնացորդներն էին: Այդ առասպելները մի ժամանակ օժանդակում էին նրանց, սնունդով երեակայությունը կառուցողական նմուշներով, որոնք ձեւավորում էին որոշակի աշխարհայացք: Ամեն ինչահայ պոետի պատկերած գորգն արդեն մաշված է, սակայն այն, այդուհանդերձ, այն միակ պատյանն է, որը պաշտպանում է հերոսին: Այսպիսով՝ գորգը կատարում է այն նույն գործառնությունը, որ կա-

տարում էր ծաղկազարդ նախշերով այն զգեստը, որը նկարագրված էր ավելի վաղ գրված բանաստեղծության մեջ: Խոսքը Բալաբյանի «Լուսին տխուր օրերը» շարքին պատկանող «Կարո՞ղ եմ ես պատմել իմ կաղացող մորաքրոջը» բանաստեղծության մասին է: Չնայած մորաքրոջ զգեստը են դրա վրայի ծաղկանախշերը ի գործու չեն տարիքն առնող կնոջը վերադարձնել երիտասարդությունը եւ վերականգնել մարդկային շփումը, սակայն դրանք առնվազն կարող են նրան մի փոքր շունչ հաղորդել, հետեւաբար երկարածել նրա կյանքը:

*Թող որ ծաղիկի մասերը բոլոր,
Նաեւ մետաքսի թելը փայլվուր,
Մատնաների փոշին ծաղիկի
Թափանցի դեպի ներքո քո շորի,
Եվ դու զգաս մաշվով հայրնդ դրանց:*

Բալաբյանի ուշագրավ երկերից է նաեւ «Արեւելյան գորգը» գրվածքը: Սրա վերջում ընթերցողի աչքերի առջեւ բացվում է վերածնունդը: Չնայած գորգը հնամաշության պատճառով մասնատվում է, իսկ դրա բրդի վրայի ներկերը խամրում, սակայն դրանք մի քերթ ու կենսատու իշխուրդուն են բերում, որն արթնացնում է մարդկանց զգացմունքներն ու սրտերը: Այս գործընթացն իր զագաթնակետին է հասնում բանաստեղծության վերջում:

*Մանուշակագույն է հանգրվան գտել
Փուրկիկան երկրի ավազուններում:
Եվ թող խոսքերը քո զգացմունքների
Ողջ ուժով դիպչեն իմ ականջներին:*

Ինչպես վկայում է այս բանաստեղծությունը, անկախ այն բանից, թե որքան հաճախ է մարդը խորասուզվում իր վշտի մեջ, նրա հոգու մորմոքը չի մեղմվում: Անկախ այն բանից՝ մեքե գիտակցում ենք դա թե ոչ, այդ ցավն անցնում է սերնդեսերկուց: Անցյալի պատկերները շարունակ պատվում են մարդկանց աչքերի առջեւ եւ ընկճում նրանց հողին: Ժամանակի ընթացքում, երբ անհատական, մշակութային եւ համամարդկային ինքնությունները միավորվում են, գիտակցական խորհրդանշությունների միջոցով երեւան է գալիս ճակատագրի՝ առավել խոր մի զգացողություն, որն արտացոլված է առաւել մեծ խորությամբ եւ ընդգրկումություն ունեցող երեակայական պատկերների մեջ: Լոկ ճակատագրի այս զգացողությունն է հնարավոր դարձնում առաջ անցնել ամապությունից, առաջ տանելը ծանր գործը, որը մարմնավորում է հայ ազգի ճակատագրի ծանրությունն ու դրամատիզմը: Ճակատագրի այդ զգացողությունը հնարավորություն է ընձեռում ստանալու որոշակի ուղղորդում: Ի վերջո, ներկայացված գործընթացն ազատ է արձակում մարդկային երեակայությունը դեպի այն աշխարհը, որը մեկ ամբողջության է վերածվել:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Սկզբը՝ էջ 5

5 Ժամանակակից քննադատությունը, անշուշտ, թույլատրելիության սահմաններում, գնահատել է Հովհ. Շիրազի քննադատությունը: Ս. Աղաբաբյանի, Ս. Սողոմոնյանի, Հր. Թամրազյանի, Ս. Աթաբեկյանի ուսումնասիրություններում ու հոդվածներում, գրչակից ընկերների քննադատական ելույթներում (Գ. Դավթյան, Հ. Սահյան, Գ. Եմին եւ ուրիշներ) այս կամ այն չափով արժեւորվել են նրա բանաստեղծություններն ու պոեմները, վերլուծվել են նրա գեղարվեստական բացառիկ մտածողության յուրահատկությունները, սակայն նույն այդ քննադատներն ու բանաստեղծները չիրազայան քառյակների կամ հայկաթիկ են անդրադարձել, կամ՝ նրանց մասին պահպանել են «փիլիսոփայական լուրջություն»:

Խորհրդային ժամանակներում չիրազայան քառյակների մասին ամենից ծավալուն խոսքը, թերեւս, հոգեբան Մ. Մազմանյանի՝ վերջ հիշված ընդամենը

ՇԻՐԱԶԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՎՇԻՍՏՈՒՄՆԵՐԸ

չորս էջանոց առաջաբանն է՝ գրված 1977 թ. լույս տեսած «Յոթնապատում» ժողովածուի համար: Ուրեմն՝ չիրազագիտությունը նախորդ փուլում պատշաճ կարեւորություն չի տվել եւ համարժեք ուշադրության չի արժանացրել գրողի ստեղծագործության մի էական մասը կազմող քառյակներին: Հոգեբան Մ. Մազմանյանը եւս սահմանափակվել է միայն մասնակիորեն ընդունելի որոշ ընդհանուր բնորոշումներով եւ չի էլ անդրադարձել քառյակների՝ գրքում արդեն առկա հեղինակային թեմատիկ բաժանումներին ու նրանց գեղարվեստական յուրահատկությունների անհրաժեշտ ընկերություն չի կատարել: Այդպիսի ընդհանուր բնորոշումներով նա կարող էր գրել, ասենք, «Քնար Հայաստանի» առաջին գրքի (1958) «Քառյակներ» բաժնի մասին, ուր դեռեւս



չկան հեղինակային թեմատիկ առանձնացումներ, եւ քառյակներին հաջորդականությունը խոսն է: Հոգեբանի քիչ թե շատ ընդունելի բնորոշումները, սակայն, խորհրդային ժամանակների բնորոշ սոցիոլոգիական

անհաջող ձեւակերպումները հասկանալիորեն շրջանցելով, կարելի է առանձնացնել էական հատկանիշները մեկը, որը, սակայն, յուրահատկ է ոչ միայն Հովհ. Շիրազի քառյակներին, այլեւ նրա ողջ քնարեր-

գությանն առհասարակ. «Շիրազի քառյակների համար,- գրել է Լա,- միշտ բնորոշը մնում է կենսախնդրությունը: Նա սիրահարված բանաստեղծ է, եւ դա իր կնիքն է դնում նրա թե՛ ողջ ստեղծագործության եւ թե՛ յուրաքանչյուր պոետական տողի վրա:

Ինչպես հայտնի է, սիրահարվածությունը եւ մարդուն իմաստություն է տալիս, եւ ներշնչում է ամենաքնքրելի ու ամենաբարձր զգացմունքներ: Նա սիրահարված է կյանքին, կնոջը, հայրենի բնությանը, մորը, աշխատավոր մարդկանց հույզերի ու ձգտումների, երազանքների, ինչպես եւ նրանց պարզ ու վճիռ հասկացողություններին: Բայց նրա սերը համատարած բնույթի չէ, այն խիստ ընտրողական բնույթ է կրում» (*Մազմանյան Մ.*, Երկու խոսք, *Շիրազ Հ.*, Յոթնապատում, «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 5: Զաղապծրում առկա ընդգծումները մերն են, իսկ ոչ հստակ ձեւակերպումներն ու քերականական անհամաձայնությունները բնագրային են - Ս. Մ.):

Շարունակությունը՝ էջ 10

Սկզբը՝ էջ 4

Եվ ո՞րն է այս ամենի, այս անմխիթար վիճակի բուն պատճառը: Իհարկե Հայաստանի քաղաքական անկայության անկումը, այլազգիների տիրապետությունը, երկրի քայքայումն ու ավերումը, հայ իշխանների եւ հոգեւոր հայրերի արտաքսվելը: Եվ Օրբելյանն արքայադուխտ Կաթողիկեի բերանով երկար պատմում է Արշակունի, Բագրատունի, Արծրունի եւ Միսական թագավորությունների, նրանց կործանման պատճառների մասին ու վերջում եզրահանգում.

*Ահա՛ տըա այսպես անցին.
Բնակին ի բաց եղծեալ գնացին:
Որպես զստուերը այլ չերեցին.
Նման երազոյ կարծօք թուին:
Որպես ծաղիկը ամառայնոյն
Արեակէզ թարշամեցին:
Որպես սաղարթը վարսեալ ծառին
Խորշակաւար ցամաքեցին...
Արդ ոչ եւս են, ոչ երեւին,
Անեացեալք նման նաւորին:
Նույն տեղում, էջ 38*

Եվ հայկական քաղաքական անկայության անկման հետեւանքը եղել է այն, որ վերագցել են հայ իշխանությունները եւ՝

*Միայն այրիի գիւս սուտ թողին,
Որպես զոչինչ ի բաց լքին:
Նույն տեղում, էջ 39*

Սակայն Արքայադուխտի չի կարող մնալ նման լքված վիճակում.

*Արդ մեկեղեալ յանվար դաշտին
Չերդ զգազան անապատին,
Չաղերս անծն կողկողագին,
Չայն արծակեն ողորմագին.
«Ո՛րք էք, որդիքս իմ սրբածին,
Չկայք առ մայրքս ծեր նախկին.
Որպես օրենն է զաւակին՝
Տանել ինքամ ծեր ծնողին»:
Նույն տեղում*

Պարզ է՝ արքայադուխտ Կաթողիկեի բերանով քերթողը բարոգում է վերադարձ, վերադարձ դեպի մայր երկիրը, վերադարձ այն ամենի, ովքեր հալածված են եղել Հայոց աշխարհից եւ միշտ կարոտակեղ աչքերով են նայել դեպի իրենց մայր երկիրը:

Սակայն նրա կանչը մնում է անպա-

Սկզբը՝ էջ 9

Սրան պետք է ավելացնել, որ շիրազյան քառյակները Նույնպես, ինչպես Թումանյանին, նրա «հոգու կենսագրությունն» են եւ դարի իրադարձությունների փիլիսոփայական ու գեղարվեստական արձագանքը:


Իսկպես էլ, Հովհ. Շիրազը, ինչպես ամեն մի ճշմարիտ բանաստեղծ, սիրահարված էր իր ժողովրդին, այսօրվա վերերկրային ու վերագազային որոշ ստեղծագործողների կամ օտար իեղինակություններին ընդօրինակողների ման իրեն աշխարհաքաղաքացի կամ «տիեզերական բանաստեղծ» չէր համարում, այլ ստանձնել էր ժողովրդի, համայն հայության բանաստեղծի ծանրագույն պատասխանատվությունը, որի ստեղծագործության միջոցով դրսևորվում էր հայկական համամարդկայնությունը: Գր. Նարեկացուց եկող էլ Հ. Վարուժանին ընդունելով հայկառաջականությունը կամ պատկերային հակադարձականությունը՝

*Ո՛վ բարեկամ, խորհե թե
Երգս է պատմած
Ցավն հաճույքին եւ
հաճույքները ցավին*

բանաձեւում, որ ժամանակին դեռեւս ԵՊՀ ուսանող Պ. Սեւակն էր նկատել իր ավարտական աշխատանք - ուսումնասիրության էջերում (տե՛ս **Սեւակ Պ.**, Վարուժանի պոեզիան, Երկեր, «Հայաստան» իրատ., հ. 6, Եր. 1976, էջ 302), առկա է նաեւ Հովհ. Շիրազի քննարկության մեջ: Նրա սերը Նույնպես ծնվում էր ցավից, եւ ցավը՝ իր հայրենիքի ու ժողովրդի հանդեպ տածած անսահման սիրուց: Առանց սիրո եւ ատելության, հավատամքի ու նվիրվածության, առանց զարմանքի ու հիացումի չեն կարող լինել շրջապատող աշխարհի յուրակերպ ընկալում ու դիտողականություն, ներշնչանք ու ոգեւորություն, ուստի եւ՝

պատկերավորման ճշմարիտ արվեստ, որովհետեւ բոլոր մեծ ու փոքր արվեստագետներն են օժտված այս հատկանիշներով, եւ առավել մեծ է նա, ում գիտակցության մեջ այս զգայություններն ունենում են ամենագործող համադրում եւ արձագանք:

Նարեկացու օրինակով գիտենք, որ մեծ բանաստեղծությունը ծնվում է մեծ հավատից, առանց «պարզեատու, ինքնաբերական բարի, ամենայն ինչի միակ ճշմարիտ արարչի» վեհության ու կատարելության ըմբռնման եւ առանց մեղավոր ու մահկանացու մարդու մաքրագործման ու աստվածային բարեգութ եւության միանալու հնարավորության գիտակցված հավատի երբեք չէր ստեղծվել այժմ արդեն Տիեզերական Եկեղեցու վարդապետի հռչակավոր «Ողբերգության մատյանի», այլապես կմար ոչ թե կա-



տարային ձգտելու եւ չհասնելու, այլ միայն մեղավոր ու մահկանացու մարդու անկատարությունից եւ «անբան չորջուռնու պես» մահվան դատապարտված բանական արարածի հակասական ու

Շարունակությունը՝ էջ 11

ՇԻՐԱԶՅԱՆ ՔՎՈՅՎԱԿՆԵՐԻ ՎՇԽԱՐԿԸ

Նայրենասիրական ողբը



*Միջագետաց եւ Հռոմիսն,
Կիւլիկիայ՝, Կողմ Ստորին,
Պատուեալ գլխովքը մեր Նախկին:
Թողո՛ւմք զողբանքս ցաւագին,
Առնեմք աւարտ լալեաց բանին.
Յուսահատիլ չէ պարտ բնաին,
Չարթնուլ ի ընդ զբաղականին:
Նույն տեղում, էջ 46*

Արքայադուխտի հավատում է, նա վստահ է, որ վերջ կլինի հայերի բազմամյա չարարանքներն, ապագան կլինի ավելի պայծառ ու լուսավոր, Նույնիսկ ավելի պայծառ, քան էր անցյալը.

*Նա՛յ Նորոգումըն մեզ կրկին,
Որ բնաւ չիլէմք գիտառ առաջին.
Կանգնէ զարթոթ թագաւորին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունք ըստ իր կարգին.
Ուղղէ զգահոյս տիրականին,
Նոր զարդարէ փառօքնն հին,
Եւս առաւել, քան զոր էին.
Տայ մեզ գոչել ծայրիւ ուժգին.
«Վերջիս է մե՛ծ, քան գառաջին»:
Նույն տեղում, էջ 48*

*Ա՛յ վա՛յ քեզ, վա՛յ, որ չլծարին,
Վա՛յ քե փեսաքնն առաջին...
Վա՛յ զքո երեցն Արշակունին.
Վա՛յ զքո կրտսեր Բագրատունին.
Վա՛յ զքո Միւնին եւ զԳործունին.
Վա՛յ զՄամիկոնին եւ զԿանանդին.
Վա՛յ զՏաթևոյն եւ ՉՈՒփացին:
Նույն տեղում, էջ 39*

Սակայն ինչքա՞ն կարելի է ողբալ. չէ՞ որ սոսկ ողբալով, անցյալի երեքմիս փառքն ու հարստությունը հիշելով, ներկայի անմխիթար վիճակը պատկերելով այն լավ օրերն ու անցյալը ետ չես բերի: Եվ ողբի ավարտն ունի լավատեսական տրամադրություններ: Մայր Կաթողիկեն դիմում է իր «Նախածին դուստրերին»՝ Հայաստանի այն ժամանակվա բոլոր նշանավոր վանքերին եւ հայաբնակ կենտրոններին ու վայրերին, որ եկել էին իր կոչին, եւ պատգամում՝ զարթնել ինքնամոռացության ընդի:

*Հաղբա՛ր, Բշինի՛ ի մմատունին,
Որ յկրագած եւ յմեքերդին.
Բազուա՛ն եւ Կա՛րս ընդ Բասենոյն,
Կարին քաղաք Բարձր Հային,
Վապուրական՝ տունըդ Վանին,
Տաթև՝, Սասունը՝ եւ Շոփային.
Եւ այլ աշխարհի հայաստեղին՝*

Շարունակելի
Սամվել ՄՈՐԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 8

Նա, գեղարվեստական ընկալումների իր յուրահատկությամբ, վարպետորեն ցույց տվեց այդ մարդկանց հոգեկան աշխարհը, որն ինչ-որ չափով նաեւ Օշականի ներաշխարհն էր: Այդ աշխարհը նախ եւ առաջ մեր առջեւ բացվեց գյուղացի մանկան պարզ ու անմեղ երազներով, սերերով, անընդհատ մի լավ բանի սպասումով, մի կտոր հացի համար պայքարով, հարուստների Կաղանդի նման Կաղանդ ունենալու, խեղճությանը չհամակերպվելու ճգնումով, Աստուծոն ուղղված մանկան բողոքով, որոնցից էլ հետագայում ծնվեց Օշական գրողը, քննադատը:

Օշականի փոքր արձակը նույնպես «Խոնարհները», «Խորհուրդներու մեհեններ», «Երբ պատանի են», «Կայսերական յաղթերգություն», «Հինն ու Նորն», «Երբ պոստիկ են» գրքերն ու շարքերը՝ հայ գյուղի կյանքը ներկայացնող մեր գրականության լավագույն էջերից է:

Օշականի հերոսները կոնկրետ ժամանակի մեջ ապրած մարդիկ են, բայց նրանք իրենց հոգեբանությամբ կարող են համարվել բոլոր ժամանակների համար հարազատ մարդիկ: «Բայց նրա արվեստն ունի մի գաղափար՝ առանձնահատկություն, որի շնորհիվ պատմվածքները ճեղքում են այդ կոնկրետ ժամանակի տարածքը եւ ձեռք բերում «յաւերժական ժամանակի» մեջ մտնելու անձնագիր» (Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 71): Իսկապես, բոլոր ժամանակներում էլ եղել են այս կամ այն մարդու կողմից խաբված մաղաքներ, արքայի կնիքներ, արթիկներ, աղքատության մեջ տվյալվող գույներ, ստեփաններ, բեկված ճակատագրերով սողմեններ, եգաներ, իրենց կյանքը փոխել ցանկացող պարոտներ, տոգասներ, ավանդության ուժին դիմող, բեկվող կյանքով վարդաններ, որոնք գալիս են ժամանակի խորքերից եւ գնում են դեպի հեռուներ:

Օշականի հերոսները հասարակ գյուղացիներ են՝ հողագործներ, այգեգործներ, որսորդներ, հովիվներ, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ, որոնք բոլորն էլ աշխատում եւ վատապահում են սեփական քրտինքով:

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐԶԱԿԸ՝ ԲԱՐՔԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Գյուղացիների գործերը տարբեր էին, բայց ցավն ընդհանուր էր. «Հացին ցավը ամենուն լեզվին վրա կըլլա միշտ» (Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 55): Տարեցտարի պակասող բերքն անհանգստացնում եւ մտածմունքի տեղիք էր տալիս բոլորին: «Մտմտուք, որքա՛ն կուգես սա մերթք գեղին մեջ, հայու գեղ մտիր, ամեն բան թաղված պիտի գտնես մռայլ մտմտուքի մը մեջ» (Նույն տեղում, էջ 52): Մի խոսքով՝ գյուղը կքած էր հոգսերի տակ՝ միեւնույն ժամանակ անընդհատ զգալով չերքեզ, ալբանացի եւ թուրք թալանիների շունչը («Տոպիճը», «Համարը», «Պաղտուն», «Գոլուն», «Շահպազ»): Այս տանջող ցավն ու մտմտուքն էլ, միգուցե, պատճառ են դառնում, որ մտերմիկ, բայց անտեսանելի մի կապ միմյանց կապեր գյուղացիներին, հատկապես երեխաներին:

Աղքատ ու որբ տղաները ստիպված էին սեփական աշխատանքով հաց վաստակել: Գյուղը որբերի նկատմամբ ներողամիտ էր, մինչեւ «Երկրորդ ակրաները բուսնին»: Դրանից հետո որբը պարտավոր էր աշխատել: Գյուղի հանրությունը պեքեր (օտար տներում վարձու աշխատող) էր դարձնում «չեն ու կարող» բնավորությամբ տղաներին, իսկ «պեքեր ըլլալու արժանիքն ունեցող մը փրկված է սատկելէ» («Տոգսանք»):


Տղաների հիմնական զբաղմունքը պարտականությունը հովիվությունն էր: Հովիվ կնքվում էին պաշտոնապես: Պաշտոնական հովիվները կապում էին կարմիր գոտի, հագնում պաշտոնական տրեխ, «սեպիական սիլահլըզ» եւ, հակառակ դեռեւ չձեռնադրված հովիվների, թեւատակին առնում կաշվե տոպրակ: Շուրջ, մահակն ու «կապ դանակն» էլ անպակաս պետք է լինեին նրանցից:

Հովիվությունը գյուղացիների համար սովորական զբաղմունք չէր, այլ կոչում, պաշտոն, որին արժանանալը մեծ պատիվ էր: Այդ «պաշտոն» ուներ իր կարեւոր նախապայմանները: Այս նպատակով էլ հովիվներին վարձեցնում էին մանկուց: Ուստի «պոստիկ հովիվների» օրն անցում էր հայրերի՝ «մեծ հովիվների» կողքին:

Հովիվները մեծ հոգատարություն եւ սրտացավ վերաբերմունք ունեին հոտի նկատմամբ: Սա զուցե պայմանավորված էր այն հանգամանքով, որ դա նրանց սեփական հոտն էր, եւ սիրելի ու թանկ իր յուրաքանչյուր այծ, յուրաքանչյուր ոչխար: Սա էլ պայմանավորում էր «պաշտոնի» անցումը հորից որդուն: Որդին էլ մեծ ոգեւորությամբ էր ստանձնում այն՝ հոր «երեքը ճերմակ» դարձնելու պայմանով:

Հովիվները զարնանը՝ Չատկի տոնից հետո, բարձրանում էին սարերը եւ ուշ աշնանը իջնում սարերից: Հովիվության այս ծեսն ավելի պատվաբեր էր: Ամառ-ձմեռ հոտից չբաժանվող տղաներն իրենց արժանիքներով զինվում էին «պաշտոնավարման» որոշակի ժամկետով զբաղվող հովիվներին: Կանաչ շահագրգռված չէին նրանց աղջիկ տալու: Նրանք կարծում էին, որ շարունակ լեռներում ապրող տղաները կորցնում են նույնիսկ խոսելու ունակությունը («Թուրքմենին աղջիկը», «Հին պատմություն», «Համբույրի մը պատմություն»):

Ոչ միայն հովիվությունը, այլեւ յուրաքանչյուր աշխատանք ուներ իր շրջանը: Սովորաբար մայիս ամիսը գյուղացու ծանր աշխատանքի, դրանով հանդերձ, ծայրահեղ աղքատության շրջան էր: Վաշխառուները Չատկի տոնից հետո հրաժարվում էին գյուղացիներին պարտքով դրամ տալուց: Ամբարները դատարկում էին, եւ գյուղացիների մեծ մասն ապրում էր ձկնով:



Մայիսը նաեւ շերամապահության շրջանն էր: Գյուղում համընդհանուր խրախճանք էր շերամի համար նախապատրաստվելը: Օշականն այնպես մանրամասն է նկարագրում շերամապահության գործընթացը, որ կարելի է վերականգնել շերամապահության արվեստը, իմանալ նրա գաղտնիքները. «Ձայնը (շերամի - Մ. Հ.) որքան բարակ ըլլա, շերամն այնքան առողջ կըլլա» (Նույն տեղում, էջ 57):

Հարսանիքները նույնպես ունեին իրենց շրջանը: Դրանք սկսվում էին գարնանը, ավարտվում աշնանը՝ մինչեւ «ինկնող ծյուղը»: Կեղանի պատկերներ են նաեւ հարսանիքների նկարագրությունները:

Հարունակելի

Մարին ՂԱԶԱՐՅԱՆ

Սկզբը՝ էջ 10



Սկսած Խորենացու «Ողբից» մինչեւ Ստեփանոս Օրբելյանի հայ գեղարվեստական գրականության մեջ առանձնանում է մի ուրույն գաղափար, այն է՝ Հայաստանի ազատագրման գաղափարը: Եվ վերը քննարկված բոլոր չորս հեղինակների (Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի, Խաչատուր Կեչառեցի, Ստեփանոս Օրբելյան) գործերն էլ ունեցել են այդ գաղափարի իրականացման որոշակի նպատակ. գաղափարապես փայփայել են հայ ժողովրդի միասնությունը եւ նախապատրաստել հայոց պետականության վերահաստատումը:

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ կեղծվել էր օտար նվաճողների ծանր լծի տակ, պետք է հաստատեր, վերականգներ իր քաղաքական ինքնուրույնությունը, վրեժ լուծեր իր գրկանքների համար: Այս լավատեսությամբ են շնչում վերը հիշատակված հեղինակների քերթվածները: Այս լավատեսությունն իր վերաբարձրումն է ստացել մեր մեծ վիպասան ԲաժՖիկ ծրագրային խոսքում. «Կրկնում եմ, հայ ազգը մի բախտավոր ապագա ունի: Արդարեւ, Նորա անցյալն անցավ արտասուքով, լազով եւ արյունով. Նորա ներկան դարձյալ ցավալի է, բայց Նորա ապագայի մասին բոլորովին անհույս չեմք: Ժամանակների մեծամեծ կորուստները կերան,

Նայրենասիրական ողբը



ամառներն ամբողջ ազգեր: Եվ կրոնքներն շատ անգամ պատճառ դարձան, որ մի ազգ կույ գնաց մյուսի մեջ: Հայաստանի աշխարհագրական դրությունը պատճառ եղավ այնքան շատ հայերի կորսության, ո-

րովհետեւ այդ երկրի վրայով անցան դեպ արեւմուտք դիմող Ասիայի բոլոր արյուն թափողներն եւ այդ երկրին հասուցին յուրանց կատաղի բարբարոսության առաջին զարկը: Բայց հայ ազգը յուր դառն

կյանքի ընթացքում կատարեց այն թեւեւ արյունոտ, բայց փառավոր հաղթությունը, այսինքն, դիմանալով բարբարոսների այնքան կորստաբեր հարվածներին, նա ազատեց թշնամու սրից մոտ չորս ու կես միլիոն հայեր, եւ հասցուց մինչեւ տասնիններորդ դարուն վերջին կիսաբաժինը՝ մինչեւ ժամանակի այդ ոսկեդեղն միջնա-սահմանը» (ԲաժՖիկ, Երկերի ժողովածու, հտ. 2, Եր., 1962, էջ 67):

Մեծ պատմավիպասանի խոսքերին համահունչ՝ դրանց հաջորդելու է գալիս հանճարեղ Տերյանի քնարը.

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնտեղ ամեն երգ եւ որբ
ամեն գիրք...

Որպես Փյունիկ կրակից կելնես,
կելնես Նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Վահան Տերյան, Երկեր, Եր., 1989, էջ 177-178

Վարդան ԵՐԿԻԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Տաճատ վրդ. Ծառուկյանն արժանացավ հայրապետական օրհնության

Հոկտեմբերի 3-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան, Լեւհաստանի հայոց հոգեւոր հովիվ Տաճատ աբեղա Ծառուկյանն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, տվչության հատուկ արարողությամբ, ձեռամբ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանի, ստացավ մասնավոր վարդապետության աստիճան:

Օրեր առաջ տեղի էր ունեցել հայր Տաճատի վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը:

Տվչության օրը Տաճատ վարդապետին, առաջնորդությամբ Եզնիկ արք. Պետրոսյանի եւ Մայր Աթոռի լուսարարապետ Յովհաննէս Զակարյանի, ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց վարդապետական աստիճան ստացած հայր սուրբին եւ անդրադարձավ Տաճատ վար-



դապետի անձին, նվիրյալ ծառայությանը եւ հանձնառության ոգուն՝ մարդեղնով նույն նախնականությունում շարունակել հոգեւոր ծառայությունը Լեւհաստանի հայ համայնքին:

Այս առիթով Նորին Արքունեցի զեհախառնեց հայտնեց վարդապետական թեզերի պաշտպանության հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչ-

պես նաեւ՝ Եզնիկ եւ Յովհաննէս արքայապետներին:

Վերջում, հայր սուրբի կուրծքը զարդարելով վարդապետական ակնակուռ լանջախաչով, Վեհափառ Հայրապետը Պառնասից արդթեղով օրհնեց Տաճատ վրդ. Ծառուկյանին՝ հայցելով, որ Տերն առավել զորացնի հայր սուրբին՝ իր հովվական ծառայության մեջ:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում կատարվել են հոգեւոր սպասավորների նոր նշանակումներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վազգեն արք. Պետրոսյանը, ազատվելով Վանքից տեղափոխվելու ստանձնած պարտականություններից, նշանակվել է Դիվանատան հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակի տնօրեն:

Թադեոս քին. Թադեոսյանը նշանակվել է Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող «Իզմիրյան» բժշկական կենտրոնի հոգեւոր տեսուչ:

Վաղարշ քին. Իսախանյանը, ազատվելով Մայր Աթոռի դիվանատանը ստանձնած պարտականություններից, իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Եկեղեցիում՝ Կենտրոնական Եկեղեցային եւ Եկեղեցային հայրապետական պատվիրակի իշխանության ներքո:

Կարգալուծ եւ հռչակվել

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալուծ եւ հռչակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վահմ արքեպիսկոպոս (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ) եւ Նիկողոս քահանա Հովհաննիսյանը (Արարատյան հայրապետական թեմ):

Վահմ արքեպիսկոպոսի տնօրինության համար հիմք է հանդիսացել իր դիմումը, իսկ Նիկողոս քահանայի պարագայում՝ Մայր Աթոռի կարգապահական հանձնախմբի եզրակացությունը՝ վերջինիս փաստացի ամունակությունը եւ հոգեւորական անհարիր պահվածքի վերաբերյալ:

Կարգալուծ եկեղեցականներն այսուհետ դասվելու են աշխարհականների շարքը եւ կկոչվեն իրենց ավագանի անուններով՝ Ավետիք Ղազարյան եւ Ավետիք Հովհաննիսյան:

ԵՀԽ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի Ուղղափառ եւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցությունը Կիպրոսում

Հոկտեմբերի 6-13-ը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախաձեռնությամբ եւ Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու հրավերով Պարալիմնի քաղաքում (Կիպրոս) տեղի ունեցավ ԵՀԽ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի Ուղղափառ եւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցությունը:

Մասնակից շուրջ 30 աստվածաբանների եւ Եկեղեցիների ներկայացուցիչների ընկերակցության Ուղղափառ Եկեղեցու նախագահ Սրբազան Սրբապետ Ս. Մարկոսյանը, Սրբապետ Ս. Մարկոսյանի ղեկավարությամբ 2012 թ. Հազիա Նապայում ներկայացված «Եկեղեցու միասնական տեսական» փաստաթուղթն էր եւ դրա վերաբերյալ ԵՀԽ անդամ Եկեղեցիների կողմից ներկայացված կարծիքները: Հիշյալ փաստաթուղթն անդրադառնում է հիմնականում Եկեղեցու դերին եւ առաքելությանը, ինչպես նաեւ արժանապատիվ եւ հիմնականում Եկեղեցիների բաժանման պատճառ հանդիսացող եկեղեցաբանական խնդիրները:

Խորհրդակցությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչն էՀԽ գործադիր մարմնի անդամ Վիգեն արքեպիսկոպոս Այբազյանը (ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ) եւ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի անդամ Տիրան վարդապետ Պետրոսյանը (Կենտրոնական Եկեղեցային եւ Սկանդինավիայի Հայրապետական պատվիրակություն):

Խորհրդակցությունը բացվեց Կոնստանդնուպոլիսի Միտրոպոլիտ Ն.Ա. Վասիլիոսի (Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցի) բարիգալությամբ խոսքով, ընդթերթավ հանդես եկան «Հավատը եւ կարգ» հանձնախմբի նախագահ Սրբապետ Ս. Մարկոսյանը (ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ) եւ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի անդամ Տիրան վարդապետ Պետրոսյանը (Կենտրոնական Եկեղեցային եւ Սկանդինավիայի Հայրապետական պատվիրակություն):

Խորհրդակցությունը բացվեց Կոնստանդնուպոլիսի Միտրոպոլիտ Ն.Ա. Վասիլիոսի (Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցի) բարիգալությամբ խոսքով, ընդթերթավ հանդես եկան «Հավատը եւ կարգ» հանձնախմբի նախագահ Սրբապետ Ս. Մարկոսյանը (ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ) եւ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի անդամ Տիրան վարդապետ Պետրոսյանը (Կենտրոնական Եկեղեցային եւ Սկանդինավիայի Հայրապետական պատվիրակություն):

Խորհրդակցությունը բացվեց Կոնստանդնուպոլիսի Միտրոպոլիտ Ն.Ա. Վասիլիոսի (Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցի) բարիգալությամբ խոսքով, ընդթերթավ հանդես եկան «Հավատը եւ կարգ» հանձնախմբի նախագահ Սրբապետ Ս. Մարկոսյանը (ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ) եւ «Հավատը եւ կարգ» հանձնախմբի անդամ Տիրան վարդապետ Պետրոսյանը (Կենտրոնական Եկեղեցային եւ Սկանդինավիայի Հայրապետական պատվիրակություն):

Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Հոկտեմբերի 13-ին, օրհնությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզեր պաշտպանեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երկու միաբաններ: Տավուշի թեմի փոխառաջնորդ Սամվել արքեպիսկոպոս Սիմեոնյանը պաշտպանության էր ներկայացրել «Մակարավանք» թեմայով թեզը, իսկ Հայ Առաքելական Եկեղեցու համաշխարհային երեստաարդաց փուլային հոգեւոր պատասխանատու Սիմեոն արքեպիսկոպոսը «Արեւմտական բեղմնավորում. տեխնիկական տրոփանքների կիրառությունը եւ Հայ Առաքելական Եկեղեցին» թեմայով թեզը:

Հանձնաժողովը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Շիրա-



կի թեմի առաջնորդ Սիմեոն Եպիսկոպոս Աջապահյանը, ԵՀԽ աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սկրտիչ եպիսկոպոս Պողոսյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վեոնատեսուչ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

նեց հանձնաժողովի անդամներին, երկու արքեպիսկոպոսներին եւ նրանց ընդդիմախոսներին՝ կատարված հետեւողական աշխատանքի համար:

Առաջիկա օրերին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, հայր Սամվելն ու հայր Սիմեոնն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության արարությամբ կարծանանան մասնավոր վարդապետության աստիճանի:

Լրատվական կայքէջը՝
ՏՆԵՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԷ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵԼԵԿՐԱՏԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակիչ՝
«Երիտասարդ Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրասենյակ վարչական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածնի
Բեռլինի թիվ 517197

Էլ. փոստ՝ grishay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.10.2016 թ.

Տպագրական՝ 2100
Գինը՝ 50 դրամ